Մ Ա Ս Ի - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն
Զ Ե Կ ՈՒ Յ Ց Ը

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2016 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները

2016 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շեշտադրումները բխելու են ՀՀ կառավարության՝ 2014 թվականի մայիսի 19-ի թիվ 511-Ա որոշմամբ հաստատված ծրագրի գերակայություններից և ուղղություններից: Այս համատեքստում քաղաքականության հիմնական շեշտադրումները դրվելու են երկու խումբ առանցքային ուղղությունների վրա, մասնավորապես, առաջին՝ գործարար միջավայրի բարելավում ու արտահանման զարգացում, երկրորդ՝ հենքային ոլորտների զարգացում:

Տնտեսական զարգացում

Գործարար և ներդրումային միջավայր, արտահանման զարգացում

Գործարար միջավայր: ՀՀ գործարար միջավայրի բարելավման շրջանակներում աշխատանքներն ուղղված են լինելու շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացմանը, պետության կողմից տնտեսավարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների բարելավմանը և պարզեցմանը, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերի կրճատմանը, պարզեցմանը: Իրականացվելու են տնտեսապես ոչ արդյունավետ, աշխատատար, ծախսատար և աննպատակահարմար մեխանիզմների կրճատմանն ուղղված առաջարկությունների նախապատրաստում և համապատասխան միջոցառումների սահմանում: Այս առումով շարունակվելու են աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

- Ուսումնասիրվելու են գործարար միջավայրին առնչվող խնդիրները, որոնց հիման վրա մշակվելու է Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների տարեկան ծրագիրը՝ նպատակ ունենալով ստեղծելու ՀՀ-ում ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար

բարենպաստ պայմաններ, միաժամանակ ապահովելով Համաշխարհային բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավումը:

- Իրականացվելու են միջոցառումներ ուղղված գործարար համայնքի հետ հետադարձ կապն ապահովելուն, օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ վերջիններիս իրազեկվածությունը բարձրացնելուն:
- Իրականացվելու են կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման ուղղությամբ աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովելու գործարար և ներդրումային միջավայրի գրավչության ուղղությամբ ձեռք բերված հաջողությունների շարունակականությունը՝ թույլ չտալով նոր անցանկալի կարգավորումների ընդունումը:

Ներդրումային միջավայր: Ներդրումային միջավայրի հետագա բարելավման գործում կարևորվելու է.

- Թափանցիկ, հստակ և ընկալելի իրավական դաշտի առկայությունը: Այս նպատակով կմշակվի ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը, ոլորտային ռազմավարությունները:
- Տեղական և օտարերկրյա գործարարների և ներդրողների համար հավասար պայմանների ապահովումը: Կվերանայվեն «Օտարերկրյա ներդրումների մասին» և «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքները և դրանց հարակից այլ իրավական ակտերը:
- Ներդրումների խրախուսման մեխանիզմների կատարելագործումը: Կշարունակվեն ներդրումների խրախուսման գործիքակազմի արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները, կմշակվեն ներդրումների խրախուսման տարբեր սխեմաներ, աշխատանքներ կիրականացվեն ՀՀ ազատ տնտեսական գոտիներում շահագործողների ներգրավման ուղղությամբ: Կշարունակվեն Հայաստանի Հանրապետության կառավարության և այլ երկրների կառավարությունների միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրերի կնքմանն, ինչպես նաև ՀՀ և ԱՄՆ միջև առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագրին առնչվող աշխատանքներ առնչվող աշխատանքներ:
- Մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնումը: Կիրականացվեն պետություն-մասնավոր հատված գործընկերությունը կարգավորող օրենսդրական դաշտի ձևավորման աշխատանքները, կմշակվեն և կհաստատվեն համապատասխան օրենքները և ենթաօրենսդրական ակտերը: Աշխատանքներ կտարվեն առանձին ոլորտների՝ մասնավորապես ճկնամթերքի և ջերմոցային գյուղարտադրանքի արտահանման շղթաների բարելավման ուղղությամբ: Կիրականացվեն ծրագրեր ուղղված Հայաստանի երկու ոլորտների՝ ագրոբիզնեսի և ոչ մետաղական

շինանյութերի մրցունակության բարձրացմանը: Կշարունակվեն ԵԱՏՄ շարջանակներում ծառայությունների միասնական շուկայի ձևավորմանն և այլ աշխատանքները:

- Ներդրումային ծրագրերի, այդ թվում՝ խոշոր ծրագրերի, իրականացումը: Կշարունակվեն մասնավոր և խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի հավաքագրման, մշակման, դրանք միջազգային գործարար համայնքին ներկայացման և դրանց ներքո ներդրումների ներգրավման աշխատանքները, ինչպես նաև ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնության տրամադրմանն առնչվող աշխատանքները:
- Հայաստանի ներդրումային հեղինակության ամրապնդման նպատակով երկրի ներդրումային միջավայրը կներկայացվի տարբեր ձևաչափի միջոցառումներում՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում, մասնավորապես 2016 թվականին նախատեսված է կազմակերպել Միջազգային ներդրումային համաժողով:

Տեսչական բարեփոխումներ

Տեսչական բարեփոխումների շրջանակներում նախատեսված հիմնական աշխատանքներն ուղղված են լինելու տեսչական համակարգի օպտիմալացմանը, տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործմանը, տեսուչների վերապատրաստմանը և տեսչություններում տվյալների փոխանակման էլեկտրոնային համակարգի մշակմանն ու ներդրմանը:

Տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են դեռևս 2009 թվականին՝ համաձայն տեսչական բարեփոխումների հայեցակարգի, որի շրջանակներում բոլոր տեսչություններում բացառությամբ Լեզվի պետական տեսչության ներդրվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգ: Տեսչությունները տնտեսավարողների ռիսկայնությունը որոշում են ոլորտային մեթոդաբանություններով, իսկ ստուգումները իրականացնում են ՀՀ կառավարության կողմից հաստատված ստուգաթերթերով: 2014 թվակնի սեպտեմբերին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ), իսկ դեկտեմբերին ՀՀ ԱԺ-ն ընդունել է «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, որը ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 9-ին: Ռիսկի վրա հիմնված համակարգի կատարելագործումը ենթադրում է ռիսկի գնահատման մեթոդաբանությունների և ստուգաթերթերի պարբերական թարմացում և վերանայում, որը պայմանավորված է ընթացքում իրականացված մի շարք օրենքների և այլ իրավական ակտերի փոփոխություններով, ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ և այլ ընթացիկ գործոններով: Ինչ վերաբերում է տեսչական համակարգի օպտիմալացման աշխատանքներին ապա նախատեսված աշխատանքները մանրամասն նկարագրված են 2014 թվականին ընդունված Հայեցակարգում, իսկ

իրավական հիմքերը ապահովված են «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք): Հայեցակարգի և Օրենքի ընդունումից հետո մեկնարկել են օպտիմալացման աշխատանքները որի արդյունքում արդեն ստեղծվել է մեկ տեսչական մարմին (Շուկայի վերահսկողության տեսչական մարմին) և այս փուլում աշխատանքներ են տարվում ՀՀ ֆինանսներ նախարարության երկու տեսչությունների և ՀՀ Առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության ուղղությամբ: Օրենքի պահանջին համաձայն օպտիմալացման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև 2018 թվականը, որի կիրարկումն ապահովելու ընթացքին հետևում է ՀՀ վարչապետի 2015 թվականի փետրվարի 9-ի N 90-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը:

Իրականացվող բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև «Ստուգումների մասին» ՀՀ նոր օրենքի ներկայացում ՀՀ Ազգային ժողով, որով հստակ սահմանվելու են ստուգում իրականացնող մարմինների շրջանակը, դրանց գործառույթները, իրավունքները և պարտականությունները ստուգումների պլանավորման, անցկացման և ամփոփման ընթացքում՝ իրականացվող բարեփոխումների ամբողջականությունն ապահովելու և ռիսկի վրա հիմնված ստուգումների ներդրված համակարգի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Ստուգումների նոր համակարգի արդյունավետության գնահատման նպատակով տեսչություն-ներում շարունակաբար իրականացվելու է մշտադիտարկում, միաժամանակ, ուսումնասիրվելու է նոր ստեղծվող մարմինների ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ստուգաթերթերը, ինչպես նաև մշակվելու են տեսուչների համար անհրաժեշտ վերապատրաստման դասընթացների ծրագրերը: Օպտիմալացման ծրագրին զուգահեռ շարունակվելու են աշխատանքները տեսչություն-ներում տվյալների փոխանակման միասնական էլեկտրոնային համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացում

Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապե-տության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: Կարևորելով ՓՄՁ-ի դերը նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գոր-ծում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնարկում է շարունակական քայլեր նոր ստեղծվող և արդեն իսկ գործող փոքր և միջին ձեռնարկատիրության տնտեսավարող սուբյեկտների գործունեության խթանման ուղղությամբ: Իրականացվող միջոցառումների արդյունքում դիտարկվում է փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների թվաքանակի ավելացում: Մասնավորապես, ՀՀ

ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված տվյալների համաձայն 2014 թվականի ընթացքում գրանցվել են 13486 Ա/Ձ, 3481 ՍՊԸ, ինչպես նաև 186 առևտրային այլ տեսակի կազմակերպություններ, 2015թ. ընթացքում՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ, գրանցվել են 10390 Ա/Ձ, 2741 ՍՊԸ, ինչպես նաև 161 առևտրային այլ տեսակի կազմակերպություններ: Միաժամանակ, համաձայն ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների 2014թ.-ի ընթացքում լուծարվել են 8487 Ա/Ձ, 383 ՍՊԸ, իսկ 2015թ.-ի ընթացքում՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ լուծարվել են 7380 Ա/Ձ և 259 ՍՊԸ, այսինքն նոր ստեղծվող ընկերությունների և ձեռնարկատիրական գործունեություն սկսող անհատ ձեռնարկատերերի թիվն էապես ավել է լուծարվող տնտեսվարող սուբյեկտների թվից: Նման ցուցանիշները ևս վկայում են տնտեսական ակտիվության աճի, գործարարությամբ զբաղվել ցանկացողների մոտ դրական սպասումների ամրապնդման և ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմանների առկայության մասին՝ հատկապես փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը զգալի գործունեություն է իրականացնում ՀՀ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու հարցում: 2015թ. 9 ամիսների ընթացքում շուրջ 5300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով տրամադրվել է 10824 աջակցություն, ընդ որում՝ տրամադրված աջակցությունների 4.4%-ն տրամադրվել է Երևանում, մնացած 95.6%-ն ուղղվել է ՀՀ մարզերում գործող տնտեսվարողներին:

2015 թվականի առաջին եռամսյակի ընթացքում մշակվել և ընդունվել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Իրականացված ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա, մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում փոխհամաձայնեցվեցին իրականացվելիք օրենսդրական փոփոխությունների հիմնական դրույթները: Մասնավորապես. ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից իրացման շրջանառությունը գործող 58.35 մլն դրամից բարձրացնել մինչև 115.0 մլն դրամ, շրջանառության հարկի 1 % դրույքաչափը փոխարինել 5%-ով՝ հնարավորություն տալով չփաստաթղթավորել ձեռքբերումների գործարքները, միաժամանակ սահմանելով վճարվելիք շրջանառության հարկի հաշվարկման դրույքաչափի մինչև 4%-ի չափով նվազեցումը՝ փաստաթղթավորված ձեռքբերումների գործարքների մասով՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարողների համար: Ներկայացված փոփոխություններն ընդունվել են ՀՀ ԱԺ կողմից 2015թ. մայիսի 7-ին և ուժի մեջ են մտել ս.թ. հուլիսի 1-ից (ՀՕ-38-Ն):

Տնտեսության տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսվարողների նկատմամբ տարբերակված և հասցեական մոտեցման ցուցաբերման սկզբունքին համահունչ, ինչպես նաև թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առքուվաճառքի գործունեության առանձնահատկու-թյունների բարդություններով պայմանավորված՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով տրվել են ոլորտում գործող տնտեսավարողների կողմից բարձրացված հարցերի կարգավորմանն ուղղված լուծումներ:

Օրենքը մշակելիս օգտագործվել են ««Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման փուլում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից կատարված հաշվարկները, տնտեսավարող սուբյեկտների շրջանում իրականացված հարցումները, Երևանի Խորենացի փողոցում, Մալաթիայում, ինչպես նաև Գյումրի և Վանաձոր քաղաքներում գործող ոսկու շուկաներում կատարված այցելությունների, ուսումնասիրությունների և հարցազրույցների տվյալները, առանձին սուբյեկտների կողմից ներկայացրած տեղեկությունների վերլուծությունները, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ քննարկումները:

Արտոնագրային վճարի չափի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվել ոսկու գների ներկայիս մակարդակի, արտարժույթի փոխարժեքի և տնտեսական այլ ցուցանիշների աճի գործոնները:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ոլորտի տնտեսավարողներին հնարավորությունն է ընձեռում կամավոր կերպով ընտրելու հարկման դաշտը՝ այն է առևտրի իրականացման վայրերում (ոսկու շուկաներ) վաճառասեղանների կամ վաճառակետերի միջոցով թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի կամ թանկարժեք քարերի առուվաճառքի գործունեություն իրականացնողներ՝ շրջանառության հարկ վճարող տնտեսավարողները (տարեկան մինչև 115 մլն ՀՀ դրամ իրացման շրջանառությամբ) կարող են համարվել արտոնագրային վճար վճարողներ՝ դրա վերաբերյալ համապատասխան հայտարարություն ներկայացնելու դեպքում, կամ իրենց գործունեությունն իրականացնել վճարելով շրջնառության հարկ:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2015թ.-ի հունիսի 19-ին և ուժի մեջ է մտել հուլիսի 1-ից:

ՓՄՁ զարգացման պետական քաղաքականությունը հիմնականում ընդգրկում է երկու ուղղու-թյուն՝ ՓՄՁ սուբյեկտների գործունեության համար բարենպաստ գործարար միջավայրի ձևավորում,

ինչպես նաև ՓՄՁ կարողությունների զարգացման և հզորացման համար ուղղակի պետական աջակցության տրամադրում: Այս համատեքստում հետևողական աշխատանքներ են իրականացվում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական կարգավորման, ՓՄՁ-ի զարգացման քաղաքականության ու ռազմավարության, ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցությամբ համապատասխան ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Պետական աջակցության տրամադրման շրջանակներում մասնավորապես իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որով նախատեսված ծրագրային միջոցառումների գերակշիռ մասը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության մարզերում, առավելապես սահմանամերձ և հեռավոր բնակավայրերում, սկսնակ ու գործող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը, նոր ՓՄՁ սուբյեկտների և նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործող ՓՄՁ սուբյեկտների մրցունակության բարձրացմանը և, ընդհանուր առմամբ, ցածր տնտեսական ակտիվությամբ առանձնացող Հայաստանի Հանրապետության մարզերում և տարածաշրջաններում տնտեսական ու գործարար ակտիվության բարձրացմանը:

ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերն իրենց մեջ ներառում են ուսուցողական, տեղեկատվական, ֆինանսական, խորհրդատվական և այլ աջակցության գործիքներ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսական աջակցությունն իրականացվում է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն», «Վարկային երաշխավորությունների տրամադրում» և «Վարկավորման տրամադրում», ինչպես նաև «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» նպատակային ծրագրերի միջոցով:

Հայաստանի Հանրապետության ՓՄՁ ոլորտի զարգացման պետական քաղաքականության իրականացման նպատակով մշակված Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. ռազմավարության համաձայն ռազմավարական նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է.

- ՓՄՁ սուբյեկտներին պետական աջակցության առկա մեխանիզմների (գործիքների) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում, ինչպես նաև նոր մեխանիզմների (գործիքների) ներդրում,
- ՓՄՁ սուբյեկտներին ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում,
- ՓՄՁ-ների կողմից նորարարական հետազոտությունների և տեխնոլոգիաների համար ֆինանսական մատչելի գործիքների, ինչպես նաև նորարարական արտադրանքի արտադրության համար բարենպաստ պայմանների ստեղծում,

- ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես՝ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն՝ գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում,
- ՓՄՁ-ների գործունեության համար օրենսդրական կայուն դաշտի ձևավորում,
- ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների հասանելիության բարձրացում,
- նոր ստեղծվող ՓՄՁ սուբյեկտների համար ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորությունների խորհրդատվության տրամադրում, գործարար ծրագրերի կազմման աջակցություն,
- զբաղվածության և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացման ապահովում (ինքնազբաղվածությունից դեպի ձեռներեցություն):

Տեխնոլոգիական զարգացում

Երկրում ինովացիոն և տեխնոլոգիական զարգացման խթանման գործընթացների նպատակն է ապահովել ազգային ինովացիոն համակարգի բաղադրիչների ձևավորումն ու զարգացումը: Այս նպատակով աշխատանքներ կիրականացվեն տնտեսության ինովացիոն կարողությունների համախմբման և զարգացման, միասնական հարթակում ինովացիոն սուբյեկտների միջև կառուցողական և փոխշահավետ համագործակցության ձևավորման ուղղությամբ: Մասնավորապես, շեշտադրում կարվի ազգային ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ կատարելագործման, նորարարական ծրագրերի ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործման, ինովացիոն գործունեությունը խրախուսող օրենսդրական դաշտի ապահովման, երկրում առկա ինովացիոն կարողությունների զարգացման, հետազոտությունների և մշակումների արդյունքների առևտրայնացմանը օժանդակելու ուղղությամբ:

Հայաստանում ինովացիոն տնտեսության ձևավորման համակարգաստեղծ նախաձեռնությունների շրջանակում կշարունակվեն աշխատանքներն ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Մասնավորապես, միջոցառումներ կիրականացվեն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ենթակայության ներքո գործող Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնի՝ որպես հանրապետությունում նորամուծությունների առևտրայնացմանը և ձեռներեցությանն աջակցման կարևոր կառույցի, ամրապնդման և զարգացման ուղղությամբ:

Հայաստանում ինովացիոն տնտեսության ձևավորման նախաձեռնությունների շրջանակում 2016 թվականի ընթացքում նախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները.

- Հայաստանում միասնական տեղեկատվական բազայի և ինովացիոն էլեկտրոնային հարթակի գործարար մոդելի մշակում,

- ինովացիոն ոլորտի դիտանցման, վերլուծության, վիճակագրության, վարկանիշային համակարգի նոր գործիքների ստեղծման աշխատանքներ,
- ինովացիոն ոլորտի ծառայությունների շարունակական բարելավման նպատակով ինովացիոն ենթակառույցների կարողությունների զարգացման միջոցառումների մշակում. պրոտոտիպային կենտրոնի ստեղծման նախաձեռնություն,
- ինժեներական, արտադրական կլաստերների գործարար մոդելի մշակում,
- ինովացիոն ոլորտի խրախուսման նոր մոտեցումների մշակում,
- մասնավոր հատվածին կիրառական գիտական ծրագրերի մեջ ներգրավելու մոտեցումների մշակում,
- նորարարական ծրագրերի փորձագիտական գնահատման համար փորձագիտական հանրույթի ձևավորում,
- վերազգային ընկերությունների հետ տեխնոլոգիական ինտեգրացիայի համար հետևողական աշխատանքների իրականացում,
- կարգավորիչ և խթանիչ օրենսդրական դաշտի ապահովում,
- ինովացիոն սուբյեկտների միջև ամուր կապերի ստեղծման աշխատանքներ,
- ինովացիոն միջավայրի և մշակույթի ստեղծման նպատակով հանրային իրազեկման միջոցառումների իրականացում, սեմինարների, համաժողովների, ցուցահանդեսների կազմակերպում:

Որակի ենթակառուցվածքի բարեփոխումներ

Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միացման պայմանագրով նախատեսվել են մի շարք վերապահումներ՝ տեխնիկական կանոնակարգերի կիրառման վերաբերյալ. Մասնավորապես՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 53-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերության դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 12 ամիս հետո՝ բացառությամբ Մաքսային միության հետևյալ տեխնիկական կանոնակարգերի, որոնց համար սահմանվում են նշված դրույթներն ուժի մեջ մտնելու հետևյալ ժամկետները.

24 ամիս հետո՝

«Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 010/2011).

«Կահույքագործական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 025/2012).

«Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների և դրանց կցորդների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 031/2012).

48 ամիս հետո՝

«Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» (ՄՄ ՏԿ 014/2011).

60 ամիս հետո՝

«Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 018/2011):

Գործարար միջավայրի ներկայացուցիչների համար «ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի Հայաստանում կիրառման վերաբերյալ» թեմայով անց են կացվել շուրջ 19 կլոր սեղաններ՝ և ԵԱՏՄ և ազգային փորձագետների մասնակցությամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության էլեկտրոնային կայքում տեղակայվել է տեղեկատվություն՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի, ինչպես նաև 2016 թ հունվարի 1-ից գործող կանոնների վերաբերյալ:

2016 թվականին շարունակվելու է Որակի ենթակառուցվածքի բաղադրիչ ոլորտներում ծառայություններ մատուցող մարմինների միջազգային ճանաչման և համագործակցության գործընթացը: ***Հավատարմագրման ոլորտի*** քաղաքականության գերակայություններն են լինելու հավատարմագրման ազգային մարմնի եվրոպական, միջազգային ու տարածաշրջանային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցությունը, հավատարմագրման միջազգային մարմինների կողմից ճանաչումը:

Հավատարմագրման համակարգում բարեփոխումները կնպաստեն համապատասխանության գնահատման ազգային մարմինների արդյունքների փոխճանաչմանը, նոր շուկայի ձեռք բերմանը, առևտրի հավասար պայմանների ստեղծմանը, հավատարմագրման պահանջները սահմանող ստանդարտների ներդաշնակեցված կիրառմանը՝ բացառելով նույն ապրանքի կրկնակի փորձարկման և կրկնակի սերտիֆիկացման անհրաժեշտությունը:

Չափումների միասնականության ապահովման բնագավառի գերակայություններ են էտալոնային սարքավորումներով հագեցված չափագիտության ժամանակակից պահանջներին համապատասխան արդյունաբերական չափագիտության էտալոնային կենտրոնի, մի շարք տրամաչափարկման լաբորատորիաների հիմնումը, որը կապահովի արդյունա-

բերական ձեռնարկությունների չափագիտական սպասարկման որակի էական աճը և օրենսդրական և գիտական չափագիտության զարգացումը՝ ունենալով չափումների միասնականության ապահովման բնագավառի համապատասխան որակավորված, պատրաստված մասնագետներ: Ատոմային էներգետիկայի միջազգային գործակալության (MAGATE) հետ միասին կշարունակվի ատոմային էներգետիկայի ոլորտում միջազգային ճանաչում ունեցող լաբորատորիայի ստեղծումը: Նախատեսվում է ստեղծել ճառագայթման ռենտգենյան տիրույթի չափման միջոցների տրամաչափարկման լաբորատորիա և Չափագիտության ազգային ինստիտուտի Օրգովի գիտական կենտրոնում վերագործարկել ռադիոալիքների էտալոնային ալեհավաքները:

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում 2016 թվականի հունվարի 1-ից ՀՀ տարածքում սննդամթերքի բնագավառում կիրառվելու են միայն ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը: Ոչ պարենային ոլորտում արտադրանքի նկատմամբ կիրառվող ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի բացակայության դեպքում կկիրառվի ազգային տեխնիկական կանոնակարգը, իսկ առկայության դեպքում՝ ԵԱՏՄ տեխնիկական կանոնանակարգը՝ ազգային օրենսդրության անցումային դրույթների գործածությամբ: Սա հնարավորություն կտա հայաստանյան արտադրողին իր արտադրանքն առանց խոչընդոտների իրացնել և հանրապետությունում և Եվրասիական տնտեսական միության ողջ տարածքում:

Ֆինանսավարկային քաղաքականություն

ՀՀ կառավարությունը շարունակելու է ֆինանսատնտեսական և վարկային միասնական պետական քաղաքականության շրջանակներում միջոցառումների իրականացումը, որն ուղղված է ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացմանը, ֆինանսական շուկայի վարկային և ոչ վարկային հատվածների զարգացմանը, ներդրումային, ապահովագրական և վարկային նոր գործիքների մշակման և դրանց ներդրման աշխատանքների իրականացմանը, մասնավորապես.

- Կշարունակվեն աշխատանքները ուսանողներին տրամադրվող ուսումնական վարկերի համար մշակված հատուկ վարկային ծրագրի շրջանակներում, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ վճարովի համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողների աջակցությանը և գիտելիքահեն ներուժի զարգացմանը,

- Զինվորական, ոստիկանության և ազգային անվտանգության ծառայողների բարեկեցության բարձրացմանն ուղղված հատուկ վարկային ծրագրի շրջանակներում կշարունակվեն աշխատանքները սպառողական մատչելի վարկերի տրամադրման ուղղությամբ, որի արդյունքում զինվորական և ոստիկանության ծառայողների համար կբարձրանա ֆինանսական հասանելիությունը, որը կտանի նրանց կենցաղային պայմանների բարելավմանը,
- Կշարունակվեն աշխատանքները ՀՀ-ում ապահովագրական համակարգի զարգացման, դրա շրջանակում նոր գործիքների մշակման և ներդրման ուղղությամբ,
- Շարունակվելու են աշխատանքները վարկային նոր գործիքների մշակման և ներդրման, ինչպես նաև արդեն առկա գործիքների պայմանների բարելավման ուղղությամբ,
- Մշակվելու և ներդրվելու են բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրմամբ պայմանավորված ներդրումային նոր գործիքներ, որը թույլ կտա արդյունավետ վերաբաշխել հասարակության խնայողությունները՝ ապահովելով ապագա կենսաթոշակառուին բարեկեցիկ ծերություն, ինչպես նաև նպաստելով տնտեսության զարգացմանը:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

Կամրապնդվեն և կընդլայնվեն փոխհամագործակցության առկա փորձն ու ուղղությունները արտաքին տնտեսական հարաբերություններում, արտաքին առևտրային քաղաքականության գործիքների հաշվեկշռված և արդյունավետ կիրառմամբ կապահովվի ազատ առևտրի հնարավորությունների հասանելիության բարձրացումը, կընդլայնվեն արտաքին տնտեսական կապերի աշխարհագրությունն ու համագործակցության ձևաչափերը: Այս համատեքստում՝

- Կշարունակվեն միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման ուղղությամբ աշխատանքները ԵԱՏՄ շրջանակներում: Աշխատանքներ կտարվեն ԵԱՏՄ և երրորդ երկրների, մասնավորապես՝ Իրանի Իսլամական Հանրապետության, Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության, Եգիպտոսի Արաբական Հանրապետության, Իսրայելի Պետության, Հնդկաստանի Հանրապետության, Մոնղոլիայի և այլ երկրների միջև արտոնյալ առևտրային պայմաններով համագործակցության հաստատման ուղղությամբ:
- Կշարունակվեն աշխատանքները ՀՀ գործադիր իշխանության մարմինների և Եվրասիական տնտեսական միության վերազգային մարմինների միջև համագործակցության կատարելագործման ուղղությամբ՝ վերազգային կարգավորման բնագավառին վերաբերվող որոշումների ընդունման հարցում Հայաստանի Հանրապետության ազգային շահերի առավել ամբողջական ապահովելու նպատակով: Աշխատանքներ կիրականացվեն ԵԱՏՄ ձևաչափով օտարերկրյա պետությունների հետ արտոնյալ, այդ թվում՝ ազատ առևտրի համաձայնագրերի կնքման ուղղությամբ, ինչը թույլ կտա

ազատականացնել հայկական ապրանքների մուտքը այդ երկրների շուկաներ և սահմանել արտաքին առևտրի քաղաքականության գործիքների կիրառման հստակ կանոններ:

- Եվրամիության հետ համագործակցությունը կշարունակի մնալ Հայաստանի առաջնայնությունների շարքում: Կշարունակեվեն ջանքեր գործադրվել ԵՄ հետ առևտրատնտեսական հարաբերությունները բոլոր հնարավոր ոլորտներով և ուղղություններով խորացնելու համար: ԵՄ-ի հետ կշարունակվեն ՀՀ-ԵՄ համագործակցության ապագա ձևաչափի և իրավական շրջանակի ձևավորման ուղղությամբ քննարկումները: Աշխատանքներ կտարվեն ՀՀ-ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտու բանակցությունների մեկնարկի ուղղությամբ, իսկ հետագայում արդեն բանակցություններ կիրականացվեն բուն համաձայնագրի շուրջ: Անհրաժեշտ միջոցներ կձեռնարկվեն ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգ» արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվելու շարունակականությունն ապահովելու ուղղությամբ: Կշարունակվեն քայլեր ձեռնարկվել ԵՄ կողմից տրամադրվող աջակցության ընդլայնման ուղղությամբ:
- ՀՀ և ԱՄՆ կառավարությունների միջև առևտրի և ներդրումների մասին շրջանակային համաձայնագրով ստեղծվող Առևտրի և ներդրումների հայ-ամերիկյան խորհրդի շրջանակներում քայլեր կձեռնարկվեն հայ-ամերիկյան առևտրատնտեսական կապերի ընդլայնման, մասնավորապես փոխադարձ առևտրի և ներդրումների խթանման ուղղությամբ: Հայկական արտահանողները կշարունակեն օգտվել 2015թ. հուլիսի 29-ից վերագործարկված ԱՄՆ «Արտոնությունների ընդհանրացված համակարգ» արտոնյալ առևտրային ռեժիմից:
- Կշարունակվեն աշխատանքները Մետաքսի ճանապարհի նախագծի շրջանակներում Չինաստանի հետ համագործակցությունն ընդլայնելու ուղղությամբ:
- Ակտիվ համագործակցությունը ԱՊՀ անդամ գործընկեր երկրների և հարևան երկրների հետ կշարունակի մնալ արտաքին տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Մասնավորապես միջոցներ կձեռնարկվեն ԱՊՀ շրջանակներում երկկողմ և բազմակողմ համագործակցության զարգացման և ինտեգրացիոն գործընթացների շարունակականության ապահովման, ինչպես նաև Վրաստանի հետ առևտրատնտեսական կապերի աշխուժացման և փոխադարձ առևտրի խթանման ուղղությամբ: Իրանի շուրջ ստեղծված նոր՝ բարենպաստ իրողության պայմաններում քայլեր կձեռնարկվեն երկու երկրների միջև առկա համագործակցությունն առավել խորացնելու, ինչպես նաև համագործակցության նոր հնարավորությունների զարգացման ուղղությամբ:

Արդյունաբերական քաղաքականություն

ՀՀ կառավարությունը շարունակելու է արդյունաբերական քաղաքականությունն՝ ուղղված ճյուղի զարգացմանը, արտահանելի հատվածի ընդլայնմանն ու դիվերսիֆիկացմանը, ներքին շուկայում տեղական արտադրանքի ներկայացվածության ավելացմանը, հումքի առավել խորը վերամշակմանը: Նշված ուղղություններով կապահովվի պետական աջակցության տրամադրումը:

Պետական աջակցություն ծրագրերի շրջանակներում.

- Կիրականացվեն «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթները, մասնավորապես՝ կմշակվեն և կիրականացվեն արդյունաբերության զարգացման 2016-2020 թվականների պետական ծրագիրը և դրանից բխող ամենամյա ծրագրերը,
- Կշարունակվի արտահանման խթանման գործիքակազմի կիրառումը և կատարելագործումը, ինչպես նաև նոր գործիքների ներդնումը՝ հասցեական և նպատակային օժանդակություն ցուցաբերելով զարգացման ծրագրեր իրականացնող ընկերություններին,
- Պետական աջակցություն կցուցաբերվի նոր և ժամանակակից արտադրությունների կազմակերպման նպատակով իրականացվող ներդրումային ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև գործող արտադրությունների ընդլայնման և վերազինման ծրագրերի իրականացմանը,
- Աշխատանքներ կիրականացվեն հանրապետությունում հումքի առավել խորը վերամշակում իրականացնելու ուղղությամբ, մասնավորակես ոսկու զտարկման, պղնձի խտանյութի վերամշակման և կաշվի վերամշակման ուղղությամբ,
- Կմշակվի արդյունաբերական գոտիների ստեղծման մոդելներ և կիրականացվի այդ մոդելների կիրառմամբ արդյունաբերական գոտիների ստեղծմանն ուղղված աշխատանքներ,
- Կընդլայնվեն արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերման շրջանակը և ծավալները,
- Կշարունակվի գործունեության իրականացումը հայկական ապրանքների արտաքին և ներքին շուկայում ներկայացման և շուկայական տեղեկատվության ապահովման ուղղությամբ,
- Կմշակվեն և կներդրվեն արտադրանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պետական աջակցության գործիքներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Ոլորտի զարգացումը կարևորվում է՝ որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության և մրցունակության բարձրացման գործիք:

2016 թվականին կշարունակվեն աշխատանքները պետություն-մասնավոր հատված համագործակցության հենքով ՏՏ ոլորտում ժամանակակից ենթակառուցվածքների՝ հետազոտական, կրթական կենտրոնների, տեխնոպարկերի, լաբորատորիաների, աքսելերատորների ձևավորման և զարգացման, տեխնոլոգիական ձեռներեցությունը խթանող ենթակառուցվածքների, այդ թվում՝ ֆինանսական մեխանիզմների զարգացման, ՏՏ ոլորտի նոր վերազգային կազմակերպությունների ներգրավման և դրանց հետ համատեղ հեռանկարային ծրագրերի իրականացման, տնտեսության տարբեր բնագավառներում ՏՏ լուծումների ներդրման և կիրառման մակարդակի բարձրացման, էլեկտրոնային առևտրի զարգացման ուղղություններով:

Կշարունակվեն Երևանի պետական համալսարանում գործող Հայ-հնդկական տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) գերազանցության կենտրոնի զարգացման աշխատանքները, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տարածքում գործող Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի և Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի հենքով մոբայլ և ամպային տեխնոլոգիաների կենտրոնի ստեղծման, ինչպես նաև «ԱյԲիԷմ»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի ձևավորման աշխատանքները, որոնց նպատակն է ձևավորել բարձրորակ աշխատուժի զարգացման համար ՏՀՏ մասնագիտական ուսուցման և այդ ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար բարենպաստ միջավայր, աջակցել ոլորտի փոքր և միջին ընկերություններին հիմնարար գիտելիքներ և փորձառություն ձեռք բերելու գործում, նպաստել բջջային լուծումների ոլորտում նորարարությունների խթանմանը, նոր գործարար կապերի հաստատմանն ու ներդրումների ներգրավմանը:

Կշարունակվի ոլորտի նոր ստեղծվող, սկսնակ հավաստագրված տնտեսավարող սուբյեկտներին հարկային արտոնությունների տրամադրումը, ինչն իր հերթին ևս կխթանի ոլորտի սկսնակ ընկերությունների ձևավորմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, նոր ներդրումների ներգրավմանը և տարածաշրջանում Հայաստանի ՏՏ ոլորտի մրցունակության բարձրացանը:

Կմեկնարկեն ՏՏ ոլորտի վարչական ռեգիստրի վարման աշխատանքները, որի արդյունքում կիրականացվի ՏՏ ոլորտի վարչական վիճակագրական տեղեկությունների հավաքագրումը, ինչը թույլ կտա վերլուծություններ և կանխատեսումներ իրականացնել ոլորտի հետագա արդյունավետ քաղաքականության մշակման համար:

Կշարունակվի Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի ծրագիրը, որի իրականացումը կնպաստի ՀՀ Շիրակի մարզի գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, տեխնոլոգիական

ձեռներեցության զարգացմանը, Գյումրի քաղաքում նոր ընկերությունների ստեղծմանը կամ ներգրավմանը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կրթական կարողությունների հզորացմանը, բիզնեսին աջակցության և խորհրդատվության տրամադրմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, գործարար և պետական հատվածների փոխշահավետ համագործակցության ընդլայնմանը:

Կշարունակվի նաև Վանաձոր քաղաքում համանման տեխնոլոգիական կենտրոնի ստեղծման ծրագիրը, որը հագեցած լինելով ժամանակակից գիտելիքային և նորամուծական ենթակառուցվածքներով՝ կխթանի օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզի սկսնակ ընկերություններին և ձեռներեցներին բիզնես աջակցության և խորհրդատվության տրամադրմանը:

Աշխատանքներ կիրականացվեն Երևանի Ջրվեժ թաղամասում Ինժեներական քաղաքի հիմնման ուղղությամբ, որի արդյունքում նախատեսվում է ժամանակակից ենթակառուցվածքների հիմնում՝ ճարտարագիտության ոլորտում ներդրումների խթանման և տեղական ու միջազգային շուկաներում բարդ տեխնոլոգիական լուծումների առաջադրման նպատակով:

Կշարունակվեն ՏՏ ոլորտի վերազգային կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացման, ինչպես նաև Հայաստանում ՏՏ ոլորտին վերազգային կազմակերպությունների ներգրավման աշխատանքները, ինչը էական նշանակություն կունենա Հայաստանի տնտեսության, մասնավորապես, ՏՏ ոլորտի արտադրողականության և մրցունակության բարձրացման համար:

Կիրականացվեն հասարակական իրազեկման միջոցառումներ, որոնց նպատակն է ոլորտի ընկերությունների միջև նոր կապերի ստեղծման խթանումը, ոլորտի նոր ընկերություններին շուկա մուտք գործելու և իրենց ապրանքներն ու ծառայությունները ցուցադրելու համար հնարավորությունների ստեղծումը, ներդրումների ներգրավումը, սփյուռքի հետ փոխգործակցության ընդլայնումը, միջազգային ճանաչում ունեցող ՏՏ ոլորտի նոր վերազգային կազմակերպությունների Հայաստան ներգրավումը:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը ներառելու է միջոցառումներ ինստիտուցիոնալ բարեփոխումների, ենթակառուցվածքների և համաչափ տարածքային տնտեսական զարգացման, մարքեթինգային քաղաքականության ակտիվացման, մարդկային ռեսուրսների զարգացման, միջազգային համագործակցության խորացման ուղղություններով: Մասնավորապես, նախատեսվում է՝

- միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ համայնքներում տնտեսական և զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- աճող զբոսաշրջային այցելությունների պատշաճ սպասարկման, ծառայությունների որակի, ինչպես նաև բարենպաստ գործարար ներդրումային միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- համայնքներում զբոսաշրջության զարգացում՝ համայնքներում զբոսաշրջային տների ցանցի ընդլայնման, տեղական ավանդույթների վերականգնման, զբոսաշրջային ներուժի բացահայտման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորման և միջազգային ու ներքին շուկայում պատշաճ ներկայացման (այդ թվում՝ ավանդական տոնակատարությունների, փառատոնների կազմակերպում) միջոցով,
- ազգային բրենդի ռազմավարությանը համապատասխան՝ համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի առավել ակտիվ մարքեթինգ և խթանում, դրանց ուղղվող միջոցների ավելացում,
- հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ Երևանում զբոսավարների միջազգային կրթական կենտրոնի գործունեության ապահովում,
- պետական և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ ոլորտի պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովման գործընթացի շարունակական իրականացում,
- ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության, ԱՊՀ-ի զբոսաշրջության խորհրդի, ոլորտի այլ միջազգային կազմակերպությունների հետ, ինչպես նաև դրանց անդամ պետությունների հետ երկկողմ ու բազմակողմ համագործակցության առավել ակտիվացում,
- Տարածաշրջանային, ինչպես նաև Չինաստանի հետ միասնական զբոսաշրջային արդյունքի ձևավորում և խթանում, այդ թվում նաև Մեծ Մետաքսե Ճանապարհի շրջանակներում:

Զբոսաշրջության ոլորտում օրենսդրական փոփոխությունների իրագործման շրջանակներում կիրականացվեն.

- զբոսավարների, ուղեկցորդների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների (զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային գործակալների), ռեստորանների կամավոր որակավորման համակարգերի ներդրում,
- զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական ցանցի ձևավորման մեկնարկ,
- զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և հյուրանոցային տնտեսության օբյեկտների հաշվառման համակարգի ներդրում,

- զբոսաշրջային ռեսուրսների գրանցամատյանի ձևավորում և վարում:

Մարքեթինգային քաղաքականության իրականացում: 2016 թվականին նախատեսվում է համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի առավել ակտիվ մարքեթինգ և խթանում: Այդ թվում.

- միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին մասնակցություն: Կապահովվի Հայաստանի մասնակցությունը 5 հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների: Ցուցահանդեսների ընտրությունը կատարվում է մասնավոր հատվածի հետ համատեղ: Կքննարկվեն հետևյալ տարբերակները.Պեկինում «WTF՝2016», Բեռլինում «ITB՝2016», Լոնդոնում «WTM՝2016», Մադրիդում «FITUR՝2016», Փարիզում «TopResa՝2016», Մոսկվայում «MMIT՝2016», Ռիմինիում «TTG՝2016», Տոկիոյում «JATA՝2016»: ԼՂՀ գործընկերների հետ համագործակցությամբ ապահովվում է ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցությունը:
- նպատակային շուկաներից օտարերկրյա փորձագետների և լրագրողների,ինչպես նաև պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպում՝ նախատեսվում է առնվազն 40 օտարերկրյալրագրողների, զբոսաշրջության ոլորտի մասնագետների ու պոտենցիալ ներդրողների ճանաչողական այցեր Հայաստան՝ առնվազն չորս երկրից:
- գովազդատեղեկատվական նյութերի թարմացում, պատրաստում և տարածում՝ նախատեսվում է առնվազն վեց լեզուներով մշակել և տպագրել Հայաստանը ներկայացնող առնվազն 15000 բրոշյուրներ և 15000 քարտեզներ, և տարածել պահանջարկի շուկաներում:
- էլեկտրոնային մարքեթինգի իրականացում՝ նախատեսվում է զբոսաշրջային բազմալեզու մասնագիտացված armenia.travel կայքի առկայությունը, որի միջոցով կապահովվի Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացումը:
- զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների համակարգի ձևավորում և զարգացում՝ կապահովվի առնվազն 8 զբոսա-շրջային տեղեկատվական կենտրոնների բնականոն գործունեությունը ՀՀ տարբեր մարզերում:
- թիրախային շուկաներում մարքեթինգային միջոցառումների կազմակերպում՝ առնվազն 2 թիրախային շուկա համարվող երկրներում մարքեթինգային միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ Հայաստանի օրեր, մշակութային միջոցառումներ, գործարար հանդիպումներ, roadshow-ներ, գովազդային վահանակներ:

Համայնքներում զբոսաշրջության զարգացում:

- Համաչափ տարածքային տնտեսական զարգացմանն ուղղված, տեղական ավանդույթների վերականգնման, զբոսաշրջային ներուժի բացահայտման, զբոսաշրջային արդյունքի

դիվերսիֆիկացման, նոր զբոսաշրջային երթուղիների ձևավորման նպատակով՝ ավանդական տոնակատա-րությունների, փառատոների կազմակերպում:

Միջոցառումները նախատեսվում են իրականացնել պետական աջակցությամբ, մասնավոր հատվածի ու միջազգային գործընկեր կազմակերպությունների, ինչպես նաև ԼՂՀ գործընկեր-ների հետ համագործակցությամբ: Այդ թվում.

- Գինուփառատոն ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի գյուղում՝ շրջակա համայնքների մասնակցությամբ,
- Ավանդական տոնածիսական ուտեստների մրցույթ-փառատոն (Խորովածի փառատոն) ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում՝ շրջակա համայնքների մասնակցությամբ,
- Մշակութային վերածնունդ փառատոն (Գորգագործություն և կիրառական արվեստներ) ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում՝ շրջակա համայնքների և ԼՂՀ մասնակցությամբ,
- «Սյունյաց ավանդույթներ» փառատոն Գորիս քաղաքում՝ շրջակա և ԼՂՀ Սոս և Մաճկալաշեն համայնքների մասնակցությամբ,
- «Գաթայի» փառատոն ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկ համայնքում՝ հյուրընկալող համայնքի մասնակցու¬թյամբ ու համագործակցությամբ,
- Ձմեռային՝ սառցե քանդակների փառատոն ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքում՝ համայնքի մասնակցու¬թյամբ ու համագործակցությամբ:

- Համայնքներում զբոսաշրջության զարգացմանն ուղղված, այդ թվում՝ զբոսաշրջային տների ցանցի ընդլայնմանը համայնքներում (հատկապես՝ գյուղական)՝ տեղի բնակչության հետ սեմինար քննարկումների և ուսուցման կազմակերպում, զբոսաշրջության նշանակության մասին վերջիններիս իրազեկվածության բարձրացում, վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Մարդկային ռեսուրսների զարգացում: Զբոսավարների Ասոցիացիաների Համաշխարհային Ֆեդերացիայի (WFTGA) հետ համագործակցու¬թյամբ նախատեսվում է պետական աջակցություն զբոսավարների միջազգային կրթական կենտրոնի գործունեության ապահով-մանը՝ կապահովվի առնվազն մեկական միջազգային և տեղական դասընթաց:

Ենթակառուցվածքների զարգացում: Ենթակառուցվածքների զարգացմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ուղղված շարունակվելու է հյուրանոցային տնտեսու-թյան օբյեկտների որակավորման գործընթացը՝ ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 4-ի N 946-Ն որոշմանը համապատասխան:

Զբոսաշրջության ոլորտում իրականացվում է ՀՀ և ԼՂՀ ներկայացուցիչների սերտ համագոր-ծակցություն, որի շրջանակներում բացի համատեղ մասնակցությունը ծրագրային

միջոցառումներին, մշտապես ցուցաբերվում է աջակցություն և տրամադրվում խորհրդատվություն զբոսաշրջության ոլորտի քաղաքականության մշակման և իրականացման ուղղությամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն են գործուղվում ԼՂՀ համապատասխան մասնագետներ՝ փորձի փոխանակման և գիտելիքների մակարդակի բարձրացման նպատակով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աջակցությամբ ԼՂՀ զբոսաշրջության ոլորտի մասնագետները մասնակցում են օտարերկրյա վերապատրաստման սեմինարներին՝ Ճապոնիա, Չինաստան և այլ:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

2016թ.-ին ոլորտում իրականացման ենթակա միջոցառումներ են հանդիսանալու.

1) տարածքային զարգացման ապահովումը, որի շրջանակներում նախատեսվում է

- մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմում,

- Հայաստանի քաղաքների զարգացման տեմպերի արագացման և ներդրումային ակտիվության խրախուսում, պետական համագործակցությամբ նպատակային ծրագրերի մշակում և իրագործում,

- մարզերում հանրային ծառայությունների տեղայնացման աստիճանի և ֆինանսների, ապրանքների ու ծառայությունների հասանելիության աճ, համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարում) գնահատում, դրանց կարգաբերում ու զարգացում,

- համայնքների անձնագրավորում՝ ուսումնասիրելով յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժը, խնդիրները և տալով դրանց լուծման ուղիները,

- ներդրումների իրականացում ենթակառուցվածքներում (այդ թվում՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ)՝ նպատակ ունենալով էապես բարելավելու գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմանները,

- այնպիսի համակարգի մշակում և ներդրում, որը կապահովի տարածքային համաչափ զարգացումը, այսինքն՝ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին ցանկացած ներդրում իրականացնելիս հստակ հնարավոր կլինի տեսնել դրա արդյունավետությունը տվյալ համայնքի, համայնքների խմբերի, մարզի համար,

- տնտեսական զարգացման և մարդկային աղքատության ցուցանիշների հիման վրա մարզային զարգացման ծրագրերի վերանայում, ինչը հնարավորություն կտա արտացոլելու յուրաքանչյուր մարզին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները, կնպաստի տարածքային զարգացման պլանավորման կատարելագործմանը և հնարավորություն կտա տարբեր մարզերի զարգացման ծրագրերը դարձնել համադրելի,

-արտագնա նիստերի անցկացման միջոցով մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանում և դրանց իրագործ-մանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում,

- մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում,

- մրցունակ և գրավիչ տարածքների զարգացման նպատակային ծրագրերի մշակում, տարածքային զարգացման ծրագրերի իրականացման մոնիտորինգի և գնահատման համակարգի ներդրում,

- տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման ուղղությամբ շարունակական աշխատանքների իրականացում,

- ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «Տարածքային զարգացման» հայեցակարգի միջոցառումների ծրագրով նախատեսված այլ միջոցառումների իրականացում:

2) տեղական ինքնակառավարման համակարգի, տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացումը, որի շրջանակներում նախատեսվում է.

- տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման և իշխանության ապակենտրոնաց-ման քաղաքականության գերակա խնդիրների համաչափ լուծում՝ վարչական և ֆիսկալ ապակենտ-րոնացում, տեղական ինքնակառավարման մարմինների հզորացում ու տեղական ժողովրդավա-րության զարգացում՝ օրենսդրության կատարելագործման և ինստիտուցիոնալ բարեփոխումների ու իրավական նորմերի հետևողական կիրարկման միջոցով,

- ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հաշվետվողականության, համայնքում ներքին և արտաքին վերահսկողության ընթացակարգերի հստակեցման զգալի բարձրացում, համայնքի քառամյա զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվությունը կազմելու, ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու և հրապարակելու օրենսդրա-կան պարտադիր պահանջի կատարում,

- տեղական մակարդակում որոշումների կայացմանը և հանրային կառավարմանը քաղաքա-ցիների մասնակցության խթանում, ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության բարձրացման նպատակով համայնքի անդամների և համայնքային քաղաքացիական հասարակության ինստի-տուտների իրազեկման, նրանց հետ խորհրդակցությունների և հետադարձ կապի մեխանիզմների ներդրում, ինչպես նաև հանրային վերահսկողության ինստիտուտի ամբողջական կայացում,

- համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացում,

- համայնքների ֆինանսական հնարավորությունների բարձրացում՝ ապահովելով նրանց բյուջեների մուտքերի կայունությունը, այդ թվում՝ տեղական տուրքերի և վճարների հայեցակարգի ընդունում, հայեցակարգի կիրարկմանն անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և ընդունում,

ինչպես նաև նվազագույն աշխատավարձի շեմի հետևողական բարձրացմամբ պայմանավորված՝ համայնքներին համապատասխան ֆինանսական օժանդակության տրամադրում,

- ՏԻՄ-երի պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանության ապահովում,

- համայնքների ֆինանսական կառավարման օրինականության, արդյունավետության, թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության բարձրացում,

- ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրում,

- համայնքների խոշորացմանը զուգընթաց՝ համամասնական ընտրական համակարգի աստիճանական ներմուծում,

- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման նպատակով ՏԻՄ-երի կարողությունների զարգացում, համայնքներում տեղեկատվական հասարակության ձևավորում և «էլեկտրոնային մասնակցության» խթանում, համայնքներում ՏՀՏ ներդրման գործում պետական, մասնավոր և միջազգային ռեսուրսների ներգրավում, համայնքներում ՏՀՏ ներդրման օրենսդրական, նորմատիվ և մեթոդական կարգավորում, տեխնիկական ենթակառուցվածքների ապահովում, ՏԻՄ-երում կառավարման տեղեկատվական համակարգերի ներդրում,

- ՏԻՄ-երում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների (հսկողություն, վերահսկողություն) և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում:

3) արխիվային պահպանության կատարելագործումը, որի շրջանակներում նախատեսվում է.

- արխիվային փաստաթղթերի երկարաժամկետ պահպանության ապահովման նպատակով «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղերում արխիվապահոցների օդակարգավորման, օդաորակման և ավտոմատ հակահրդեհային պահպանության ազդանշանային համակարգի ներդրում, ինչպես նաև ՊՈԱԿ-ի Լաբորատորիայի համար փաստաթղթերի, կինոնկարների ժապավենների, լուսանկարների, ձայնագրությունների վերականգնող և թվայնացնող ժամանակակից սարքավորումների ձեռքբերում,

- սոցիալական ապահովության պետական ծառայության և այլ մարմինների հարցումների միջոցով քաղաքացիների սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) էլեկտրոնային տարբերակի տրամադրման և արխիվային տեղեկություն ստանալու համար դիմումների առցանց՝ Հայաստանի ազգային արխիվի պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացնելու համակարգերի, այդ թվում՝ նաև էլեկտրոնային վճարման համակարգերի ներդրում:

Բնակչության միգրացիայի կարգավորման ոլորտում իրականացվելիք աշխատանքները նպատակաուղղված են լինելու միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության

հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի ապահովմանը, ինչպես նաև միգրանտների, ապաստան հայցողների ու փախստականների հարցերին վերաբերող միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով ստանձնած հանձառությունների կատարմանը:

Կշարունակվեն «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի՝ միգրացիայի ոլորտի մասով, կիրարկմանն ուղղված աշխատանքները:

Նոր թափ կստանա համագործակցությունը Եվրոպական Միության հետ՝ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Աջակցություն միգրացիային և սահմանների կառավարմանը» ԵՄ տեխնիկական աջակցության ֆինանսավորման համաձայնագրի իրականացման շրջանակներում:

Կիրականացվեն ՀՀ կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրով» 2016 թվականի համար նախատեսված մի շարք միջոցառումներ:

Կիրականացվեն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 17-ի N 769-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ միգրացիայի ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Եվրամիությունում և Միասնական տնտեսական տարածքում ընդունված մոտեցումներին և սկզբունքներին համապատասխանեցնելուն ուղղված գործողությունների 2014-2016 թվականների ծրագրով» 2016 թվականի համար նախատեսված միջոցառումները:

Կմշակվի և ՀՀ կառավարություն կներկայացվի ՀՀ-ում բնակվող երկարաժամկետ միգրանտների, ինչպես նաև ՀՀ վերադարձող քաղաքացիների ինտեգրման (վերաինտեգրման) քաղաքականության հայեցակարգը:

Կշարունակվեն աշխատանքները ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության հետ՝ ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի բացման նպատակով:

Կշարունակվեն օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին վերադարձի հարցերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու հնարավորություն ընձեռող Tundarc.am կայքի միջոցով խորհրդատվության տրամադրման ուղղությամբ աշխատանքները:

Կշարունակվեն աշխատանքները ծառայությանը դիմող ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներին միգրացիոն տարբեր հիմնախնդիրների շուրջ խորհրդատվության տրամադրման ուղղությամբ:

Կշարունակվեն աշխատանքները միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ:

Գյուղատնտեսություն ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2016թ. նպատակաուղղված կլինի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը, և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտի կայունացման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության ապահովման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար:Իրականացվող քաղաքականությունը ուղղված կլինի նաև գյուղական տարածքների համաչափ զարգացմանը և ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացմանը, սերմնաբուծության համակարգի ամրապնդմանը և զարգացմանը, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարին, հողերի մելիորատիվ վիճակի բարելավմանը, անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների իրականացմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի) և վարկավորման մատչելիությանը: Ոլորտի կարևոր ուղղություններից է մնալու հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության և օգտագործման բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը: ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նպատակադրել է գյուղատնտեսությունում արդյունավետության բարձրացման միջոցով, զուգահեռաբար գյուղում ստեղծել կյանքի հարմարավետ պայմաններ՝ յուրաքանչյուրի անհատի լիարժեք ինքնադրսևորման համար, այն գիտակցումով, որ չի կարող լինել զարգացող գյուղատնտեսություն՝ առանց հարմարավետ գյուղի: Առանձնակի ուշադրություն է դարձվելու բարձր լեռնային ու սահմանամերձ շրջաններին: Նախատեսվում է շարունակել ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

- պետության և մասնավոր հատվածի միջև իրավահարաբերությունների կատարելագործում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի բարելավում,
- գյուղատնտեսության հիմնական ռեսուրսների, մասնավորապես հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում,

- գյուղատնտեսությունում գործող տնտեսվարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

- գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացում, մասնավորապես կոոպերացիայի խթանում,

- գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածության բարձրացում և մատչելի մեխանիզմներով տնտեսվարողներին գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում,

- տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ընդլայնում, համակարգի բարելավման մեխանիզմների մշակում,

- գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավմանը, գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների փոխհարաբերությունների կատարելագործմանը,

- ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն աջակցություն:

Նշված քաղաքականության կենսագործման նպատակով ՀՀ 2016 թվականի պետական բյուջեով նախատեսվող ծախսերը առաջնահերթ կարգով նպատակաուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- բույսերի պաշտպանության և գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին,
- հողերի ագրոքիմիական հետազոտություններ և բերրիության բարձրացմանը,
- բնական կերհանդակների նպատակային և համակարգված օգտագործմանը, գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների՝ հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի, տարբեր մշակաբույսերի բարձր վերարտադրության սերմերի մատչելիության մակարդակի բարձրացմանը,
- վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման տարբեր մեխանիզմների ներդրմանը,
- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդմանը և զարգացմանը,
- ագրարային ոլորտի տնտեսավարողներին շուկայահանման գործընթացի աջակցությանը,
- գյուղատնտեսական մթերքներ վերամշակող ճյուղի զարգացմանն աջակցությանը, արտահանման խթանմանը,
- անտառային տնտեսության պահպանմանը, պաշտպանությանը:

Որպես ագրոպարենային համակարգի զարգացման 2016թ. քաղաքականության գլխավոր նպատակ շարունակելու է պահպանվել երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության, վարկավորման բարելավման, ոլորտը սպասարկող

ենթակառուցվածքների զարգացման, օրենսդրական հիմքերի բարելավման և ագրարային ոլորտում տարբեր տնտեսավարման ձևերի զարգացման ուղղությամբ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի ագրարային ոլորտի մասնավոր հատվածի նախաձեռնողական կարողությունների ընդլայման և տնտեսավարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, տեղական վերականգնվող էներգապաշարների արդյունավետ օգտագործմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած նոր արտադրող հզորությունների կառուցումը, ատոմային էներգետիկայի հետագա զարգացումը՝ այդ թվում՝ գործող ատոմային էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հետ կապված աշխատանքների իրականացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը, և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին, Համաշխարհային բանկի վարկային միջոցների հաշվին կշարունակվեն՝ Հրազդան ՋԵԿից Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած շուրջ 230 կմ երկարությամբ Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք-Որոտան-1 էլեկտրահաղորդման 220 կՎ լարման օդային գծերի վերակառուցման, «Աշնակ», «Երևանի ՋԷԿ», «Հաղթանակ» 220 կՎ և «Չարենցավան-3», «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանների վերազինման, էլեկտրահաղորդման ցանցի պահպանության համար մեքենաների և սարքավորումների ձեռքբերման և էլեկտրաէներգետիկական համակարգի կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքները: Ասիական զարգացման բանկի կողմից հատկացված վարկային միջոցների հաշվին կիրականացվեն «Ագարակ-2» և «Շինուհայր» 220 կՎ ենթակայանների և կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման երկրորդ փուլի աշխատանքները: Կշարունակվեն Գերմանիայի զարգացման վարկերի բանկի վարկային միջոց-

ներով իրականացվել «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրով նախատեսված աշխատանքները, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետության Արտահանման զարգացման բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին՝ Հայաստան-Իրան 400 կՎ լարման նոր էլեկտրահաղորդման օդային գծի կառուցման աշխատանքները:

Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի և դրամաշնորհի հաշվին կշարունակվի Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման աշխատանքների իրականացումը, իսկ սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կիրականացվեն Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքները:

Նոր միջուկային էներգաբլոկի շինարարության ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով կշարունակվեն բանակցությունները հնարավոր ներդրողների հետ:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է 2013թ. հոկտեմբերի 23-ի 182-ՆԿ ՀՀ Նախագահի կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգ»-ում և 2014թ. հուլիսի 31-ի թիվ 836-Ն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «ՀՀ էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույց»-ում /կետ 2՝ կազմել ծրագիր՝ նոր ատոմային էներգաբլոկի կառուցման գործընթացի կազմակերպման նպատակով, ժամկետ 2015թ/: Ծրագիրն արդեն իսկ մշակվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից և սահմանված կարգով ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը: Վերջինում նախատեսված է, որ մինչև 2018 թվականը ավարտել նոր ատոմային էներգաբլոկի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով հնարավոր ներդրողների հետ տարվող բանակցությունները:

Նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագիրն ընդգրկված է նաև ներկայումս քննարկման փուլում գտնվող՝ «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» ծրագրում, որում նախատեսվում է մինչև 600 ՄՎտ հզորությամբ նոր ատոմային բլոկի կառուցում:Նոր միջուկային էներգաբլոկի շինարարության ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցների ներգրավման նպատակով կշարունակվեն բանակցությունները հնարավոր ներդրողների հետ:

Հայաստանի էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի հիմնադրամը՝ Համաշխարհային բանկի կողմից տրված դրամաշնորհային և վարկային միջոցների հաշվին կիրականացնի

հանրային շենքերում էներգախնայողության միջոցառումներ: Կիրականացվեն նաև Կլիմայի Ներդրումների Հիմնադրամի Վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի շրջանակներում (SREP) արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրաստման և Հայաստանում հայտնի հավանական երկրաջերմային տեղանքներից մեկում՝ Կարկառում, երկրաջերմային հետախուզական հորատման աշխատանքները, ինչպես նաև ջերմային պոմպերի ու արևային ջրատաքացուցիչների ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը:

27.06.2014 թվականին Կլիմայի ներդրումային հիմնադրամների CIF SREP ենթահանձնաժողովը հավանություն տվեց «Հայաստանի Հանրապետության վերականգնվող էներգետիկայի ներդրումային պլանին», որպես հիմնարար փաստաթուղթ՝ այնտեղ ընդգրկված ծրագրերի հետագա իրականացման նպատակով՝ 40 մլն. ԱՄՆ $ ընդհանուր ֆինանսավորման հնարավորությամբ: Նշված գումարի շրջանակներում ներդրումները պետք է իրականացվեն հետևյալ ուղղություններով՝ երկրաջերմային էներգետիկայի, արևային ֆոտովոլտային էներգետիկայի, արևային ջրատաքացուցիչների և ջերմային պոմպերի համար ենթակառուցվածքների ստեղծման և/կամ բարելավման ծրագրերի իրականացման նպատակով:

1. 2015 թվականի հուլիսի 23-ին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-471-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապեության և վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի նախապատրասման համար»՝ թիվ TFOAO418 դրամաշնորհի համաձայնագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների ծրագրում ներառվել է «Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը:

Արևային ցանցային ՖՎ կայանի (կայանների) կառուցման ներդրումային ծրագրում կամրագրվեն տեխնիկատնտեսական ցուցանիշներ, որոնք հիմք կհանդիսանան ՀՀ էլեկտրաէներգետիկ համակարգում մրցույթային կարգով ընդունելի արևային էլեկտրակայանների սակագների սակարկումը կազմակերպելու համար: Այդ կայանների կառուցման արդյունքում կնվազի Հայաստանի Հանրապետության կախվածությունը ներկրվող էներգակիրներից:

2. 2015 թվականի հուլիսի 21-ին ՀՀ նախագահի թիվ ՆՀ-467-Ն հրամանագրով վավերացվել է Հայաստանի Հանրապեության և վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագիրը» դրամաշնորհի համաձայնագիրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի գերակա խնդիրներում ներառվել է.

Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի շրջանակներում երկրաջերմային ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Աշխատանքների նպատակն է Կարկառի երկրաջերմային տեղանքում առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար հորատանցքերի հորատման աշխատանքների կատարման կապալառուի ընտրությունը և հորատման աշխատանքների մեկնարկը:

Շարունակվում են աշխատանքները Կարկառի երկրաջերմային ծրագրի մշակմանն ու կազմմանն ուղղված առաջնային էներգակրի պարամետրերի որոշման համար՝ մոտեցնող ճանապարհի և հորատման հարթակի կառուցումը: Երկրաջերմային համապատասխան պեոտենցիալի հաստատման դեպքում կկառուցվի երկրաջերմային էլեկտրակայան:

Կշարունակվի Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից ֆինանսավորվող Գերմանա-հայկական հիմնադրամի «Վերականգնվող էներգետիկայի III» ծրագիրը:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի տեխնիկական կանոնակարգերի վերամշակման և ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ միջազգային համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ շարունակվելու են հանրապետության գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի օպտիմալ ծավալի որոշման և դրա արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2016 թվականին իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրներն են.

- միջազգային չափորոշիչներին համահունչ, հետախուզված և գնահատված ընդերքի պաշարների սահմանված կարգով փորձաքննության ապահովումը,

- «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան, օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարումը, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքի տեղամասերի պետական հաշվառման իրականացումը, հանքավայրերի և օգտակար հանածոների երևակումների պետական կադաստրի վարումը,

- Հայաստանի Հանրապետության օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով երկրաբանական տեղեկության թափանցիկության և պոտենցիալ ներդրողների համար վերջինիս հասանելիության ապահովումը,

- ընդերքօգտագործող կազմակերպությունների գործունեության հետ կապված հիմնախնդիրների լուծման համար նոր, ժամանակակից, ինչպես նաև միջազգայնորեն ընդունված մոտեցումների կիրառման խթանումը:

Միջուկային անվտանգության **բնագավառում** 2016թ. առաջնահերթ ուղղություններ են լինելու միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի զարգացումը և կատարելագործումը:

Ոլորտում իրականացվող առաջնահերթ միջոցառումներն են հանդիսանալու.

- ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) անվտանգության ստանդարտների, Եվրոպական միության և Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի (WERNA), անվտանգության պահանջներին, ինչպես նաև հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի և «Սթրես-թեսթերի» ուսումնասիրության արդյունքները, զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման լիցենզավորումը ու Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի մշակումը, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը, անվտանգությանը վերաբերվող փաստաթղթերի քննարկումը, վերլուծությունը և գնահատումը,

- Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի ՀՀ կողմից վավերացրած թվով 10 միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը (օրենսդրության համապատասխանեցում պայմանագրերի պահանջներին, տեղեկատվական բազայի ստեղծում և փոխանակում պայմանագրերի անդամ-պետությունների միջև, ազգային հաշվետվությունների մշակում և ներկայացում),

- «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը,

- իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան,

- ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը,

- շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտմամբ պայմանավորված՝ բնակչության ճառագայթահարման վերահսկողության նպատակով շրջակա միջավայրի ռադիացիոն մոնիտորինգի ժամանակակից համակարգի ներդրումը,

- մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

- միջուկային և ճառագայթային անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

- միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը:

- Կարգավորող մարմնի տեսչական գործունեության կատարելագործումը, մանսավորապես նախատեսվում է.

- համապատասխանեցնել տեսչական գործունեության վերաբերյալ գործող կարգավորող և ղեկավարող փաստաթղթերը ժամանակակից պահանջներին,
- կատարելագործել միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ թափոնների տեղակայանքների, ատոմային էներգիայի օգտագործման այլ օբյեկտների տեսչական ստուգումների անցկացման աշխատակարգերը (համապատասխանեցնել ժամանակակից մոտեցումներին),
- բարձրացնել տեսուչների աշխատանքի որակը,
- տեսչական գործունեության պլանավորումն իրականացնել կարգավորման ենթակա գործունեության ռիսկի գնահատման հիման վրա:

- Վթարային հակազդման ազգային համակարգի համապատասխանեցումը ՀՀ միջազգային պայմանագրերի և ԱԷՄԳ պահանջներին: Այդ նպատակով նախատեսվում է.

- զարգացնել և կատարելագործել գործող ճառագայթային մոնիտորինգի և տեղեկատվության համակարգը,
- համապատասխանեցնել վթարային հակազդման կենտրոնը, ներառյալ կենտրոնի գործունեության հրահանգները, ժամանակակից պահանջներին, հաշվի առնելով Ֆուկուշիմայի վթարի ուսումնասիրության արդյունքները,
- անցկացնել վթարային վարժանքներ ԱԷՄԳ պահանջներին համապատասխան,
- վերանայել վթարային հակազդման ազգային համակարգի մեջ մտնող նախարարությունների և գերատեսչությունների հետ փոխգործունեությունների մասին համաձայնագրերը,
- կատարելագործել ներքին և արտաքին տեղեկատվական համակարգը:

- Միջուկային նյութերի չտարածման երաշխիքների, հաշվառման և հսկման պետական համակարգի զարգացումը, մասնավորապես նախատեսվում է.

- վերամշակել նորմերը և կանոնները՝ համաձայն ԱԷՄԳ առաջարկությունների և ստանդարտների,

- կատարելագործել միջուկային և ռադիոակտիվ նյութերի հաշվառման և վերահսկման պետական համակարգը,
- մշակել և ներդնել միջուկային և ռադիոակտիվ նյութերի պետական հաշվառման արդիական համակարգեր, ներառյալ ծրագրային միջոցներ:

- Միջուկային և ռադիոակտիվ նյութերի ու տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության կարգավորումը, որի հիմնական խնդիրներն են՝ .

- լրամշակել նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերը, մշակել ու ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել ռադիոակտիվ նյութերի ֆիզիկական պաշտպանության պահանջները,
- անցկացնել միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի տեսչական ստուգումներ ՀՀ մյուս պատասխանատու գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ, միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության վիճակը գնահատելու համար, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով նոր մարտահրավերները, վերանայել նախագծային սպառնալիքը.
- ստեղծել կապի պաշտպանված կանալներ:

- «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացումը: Հաշվի առնելով, որ այն պայմանավորված է ատոմային էներգիայի օգտագործմանը ուղեկցող գիտատեխնիկական բնույթի բազմապիսի խնդիրների առկայությամբ (գործող և նոր ատոմակայանի, ուրանի արդյունահանման, միջուկային աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգության), որոնց լուծումը պահանջում է վերլուծական, տեխնիկական, հաշվողական, մեթոդական և փորձագիտական աշխատանքների կատարում:

«Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի զարգացման առաջնահերթ ուղղություններն են լինելու.

- միջուկային անվտանգության գնահատման ժամանակակից մեթոդների, ներառյալ ռիսկի գնահատման մեթոդների յուրացումը և կիրառումը,
- մասնագիտական որակավորման բարձրացումը և նոր կադրերի պատրաստումը, ռադիոլոգիական ազդեցության գնահատման և չափումների նորագույն միջոցների և մեթոդների ներդնումը:

Միջազգային համագործակցության զարգացման շարունակումը՝ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության, Եվրոպական հանձնաժողովի, ԱՄՆ-ի, Չեխիայի, ՌԴ և այլ երկրների միջուկային կարգավորող մարմինների հետ տեխնիկական աջակցության ծրագրերի շրջանակներում:

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում էապես կարևորվում է անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, դրված նոր գաղափարների իրացումն ու ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող ծագած հիմնախնդիրների լուծումը: Խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ են լինելու համակարգերում ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը, համակարգերում կառավարման բարեփոխումների խորացումը (որը ենթադրում է մասնավոր գործունեության զարգացում՝ մասնավորապես ««Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահապանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գործընթացի իրականացում՝ վարձակալի ընտրություն), ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը և իրականացումը, ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, համակարգում առկա և նոր գործարկվող հզորությունների պատշաճ շահագործումը և պահպանումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կատարելագործման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնածախսածածկման ապահովման շարունակումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2016թ. Ընթացքում շարունակվելու են ներդրումների իրականացումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու համակարգերի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, առկա ենթակառուցվածքների արդիականացմանը և նորերի կառուցմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

- «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Մելիորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ աշխատանքներ:

- Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, Եվրոմիության Հարևանության Ներդրումային ֆոնդի, Եվրոպական Ներդրումային Բանկի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման բանկի, Եվրասիական բանկի, Աբու Դաբիի Զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի իրականացման ապահովում:

- «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում մասնավոր կառավարչի հետ կնքված պայմանագրով նախատեսված ցուցանիշների կատարման ապահովում:

- Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների և ջրային համակարգերի կառավարման բարեփոխումների շարունակություն:

- Ջրամատակարար ընկերությունների սպասարկման տարածքից դուրս գտնվող գյուղական բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացում:

- Ջրի և էլեկտրաէներգիայի խնայողության խրախուսում՝ ապահովել ջրամատակարարման տևողության ավելացումը և ջրի որակի բարելավումը, ինչպես նաև հաշվառման համակարգի կատարելագործման շարունակում:

- Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտներում ապօրինությունների կանխարգելման ուղղությամբ վերահսկողության իրականացում.

- Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու Դաբիի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման ապահովում:

Ընդհանուր առմամբ, նախատեսվում է ապահովել խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացումը՝ հիմնականում նպատակ դնելով բարձրացնել դրանց շահագործման հուսալիությունը և արդյունավետությունը, բարձրացնել համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը (այդ թվում՝ մասնավոր կառավարման միջոցով), ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների որակը: Միաժամանակ նախատեսվում է շարունակել կարևորագույն հիդրոտեխնիկական կառուցվածքների, այդ թվում՝ ջրամբարների պատվարների ամրապնդման ու նորոգման աշխատանքները, որը կապահովվի դրանց անվտանգ ու անխափան շահագործումը:

Հաշվի առնելով նախորդ տարիների մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2016 թվականին նախատեսվում է ավարտել «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղ-

կոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կառավարման պայմանագիրը և, համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի №883-Ն և № 888-Ն որոշումների, ընկերությունները կանցնեն կառավարման նոր ձևի՝ վարձակալության, ուստի 2016 թվականին նախատեսվում է շարունակել գործառնական սուբսիդիայի տրամադրումը:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի №883-Ն որոշմամբ հաստատված պետական-մասնավոր գործունեության հետագա զարգացմանն ուղղված՝ Հայաստանի խմելու ջրի ոլորտի բարեփոխումների գործողությունների ծրագրի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն նախատեսվում է վարկային պարտավորությունները (կամ դրա մի մասը) կատարել վարձակալի կողմից՝ վարձավճարի տեսքով, ուստի մինչև հարցի վերջնական լուծումը՝ անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարության կողմից շարունակվի տոկոսավճարներից ազատման և մայր գումարի մարման համար 2016 թվականի ՀՀ պետական բյուջեից ընկերությունների սուբսիդավորման քաղաքակա-նությունը:

Տրանսպորտ և կապ

Բնագավառում տրանսպորտի և կապի ոլորտների պետական կարգավորման, համակարգի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների գործունեության կառավարման և կոորդինացման միջոցով 2016 թվականին կշարունակվի տնտեսության մյուս ճյուղերի (ոլորտների) կազմակերպությունների և ազգաբնակչության պահանջարկի ապահովումը՝ փոխադրումների (բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների), փոստային ծառայությունների մատուցման, ռադիոհեռարձակման և հեռուստահեռարձակման, ինչպես նաև ճանապարհների պահպանման բնագավառներում:

Ճանապարհային տնտեսության բնագավառում. երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորա-փոխադրումների հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով, նախատեսվում է իրականացնել պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև տրանս-պորտային օբյեկտների հիմնանորոգում, պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհ-ների պահպանում, շահագործում:

Կշարունակվեն աշխատանքները Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրի շրջանակներում:

2016 թվականին վարկային միջոցների հաշվին կիրականացվի Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման վարկային նոր ծրագիրը:

Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի շինարարության շրջանակներում 2016թ. Տրանշ 1-ով, Տրանշ 2-ով (ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումները), Տրանշ 3-ով (Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ՝ ներառյալ ՀՀ կառավարության համաֆինանսավորումը և Հողերի Օտարման և Տարաբնակեցման Ծրագիրը) կշարունակվեն իրականացվել մեկնարկված ճանապարհային հատվածների վերակառուցման, լայնացման, հողերի օտարման ծրագրի աշխատանքները: Բացի այդ, Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի կողմից հատկացվելիք միջոցներով 2016 թվականին կիրականացվեն նաև Տրանշ 4-ով նախատեսվող աշխատանքները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ 2016 թվականին կիրականացվեն Բագրատաշենի կամուրջի վերակառուցման ծրագիրը աշխատանքները:

Տրանսպորտի բնագավառում 2016թ. կշարունակվեն «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆների) պահպանման (սպասարկման) աշխատանքները:

Աշխատանքներ կիրականացվեն Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման ու զարգացման, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակման և կատարելագործման, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկների տպագրման պատվիրատուի և դրանց պահպանման, հաշվառման ու տեխնիկական զննության կայաններին տրամադրման գործառույթների իրականացման, տեղեկատվական բանկի վարման և այլ խնդիրների իրագործման նպատակով:

Երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների կազմակերպումը բարելավելու նպատակով նախատեսվում է մշակել նոր երթուղային սխեմաներ՝ երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների կապակցմամբ՝ փոխադրումների սկզբնակետերի ու վերջնակետերի համատեղման ճանապարհով:

2015 թվականի արդյունքներով համաձայնեցված ծավալներով և ուղղություններով Երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած վնասի փոխհատուցման նպատակով նախատեսվում է իրականացնել սուբսիդիայի տրամադրում դրանք կազմակերպող համապատասխան ընկերությանը:

Շարունակվելու են «Հարավային երկաթուղու» կառուցման տեխնիկա-տնտեսական հիմնավորման և նախագծման աշխատանքները:

Կապի բնագավառում աշխատանքներ կիրականացվեն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունում կառավարման նոր մոդելի ներդրման և բաժնետոմսերը հավատարմագրային

կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հսկողության ուղղությամբ:

Աշխատանքներ կիրականացվեն ՀՀ տարածքում գրանցված ռադիոկապի տարբեր ցանցերի միաժամանակյա աշխատանքի ապահովման, շահագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեխնիկական պարամետրերի փորձաքննության, կապի և ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցման, ռադիոէլեկտրոնային միջոցներին հատկացվող անհրաժեշտ հաճախությունների (կապուղիների) համապատասխան մարմինների հետ համաձայնեցման և միջազգային իրավական պաշտպանության ապահովման, ռադիոխանգարումների և տեսչավորման արդյունքում ներկայացված տվյալների, չափումների արձանագրությունների, ռադիոէլեկտրոնային միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիության փորձաքննություն և հաճախությունների օգտագործման հնարավորության անհրաժեշտ հաշվարկների կատարման նպատակով:

2016 թվականին կապի բնագավառում կշարունակվեն աշխատանքները Հանրապետական սփռման մուլտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալման ծրագրով նախատեսված աշխատաքները:

Ավիացիա

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով բնագավառում իրականացվում է թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցում եվրոպական և միջազգային ստանդարտներին: Շարունակվում են արդիականացվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը և նրա ենթակառուցվածքները՝ ուղևորների օդանավակայանային սպասարկման ներկայիս մակարդակը պահպանելու և բարձրացնելու նպատակով: Հավասար մրցակցային պայմաններ են ապահովվում Հայաստանի Հանրապետությունից և դեպի Հայաստանի Հանրապետություն օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:

2016 թվականին կշարունակվեն բաց երկնքի քաղաքականության նախանշված ուղղություններով աշխատանքները, այդ թվում՝

- Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի վերանայման և գործող սահմանափակումների վերացման աշխատանքներ գործընկեր պետությունների հետ.

- Օդային հաղորդակցությունների հաստատման հնարավորության բացահայտում, գնահատում և այդ ուղղությամբ աշխատանքների իրականացում պոտենցիալ գործընկեր պետությունների հետ.
- Եվրոպական Միության ընդհանուր ավիացիոն գոտուն միանալու նպատակով բանակցությունների վարում Եվրոպական Հանձնաժողովի հետ և համապատասխան աշխատանքներ ավիացիայի ոլորտի օրենսդրական դաշտի՝ ԵՄ չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ.
- Հայկական ավիափոխադրումների շուկան նոր ավիաընկերություններով համալրելու ուղղությամբ ավիաընկերությունների հետ բանակցությունների վարում, վերջիններիս կողմից շուկայի ուսումնասիրության նպատակով համապատասխան տեղեկատվության և այլ աջակցության տրամադրում.
- Հայկակական ավիափոխադրումների շուկայի շարունակական ուսումնասիրություն, համապատասխան վերլուծություն, խնդրիրների, դրանց պատճառների և լուծումների բացահայտում.
- Գյումրու «Շիրակ» օդանավակայանի զարգացման ծրագրի հետևողական իրականացում:

Ոլորտի 2016թ. գործունեության հիմնական ուղղություններն են լինելու նաև.

- օդային տրանսպորտի բնագավառում վարվող քաղաքականության հիմնադրույթների մշակմանը, ներքին և միջազգային օդային հաղորդակցությունների իրավունքների և այդ իրավունքներին վերաբերող, ինչպես նաև քաղաքացիական ավիացիայի բնագավառում թռիչքային և ավիացիոն անվտանգության, օդային երթևեկության սպասարկման նպատակով միջազգային օդային հաղորդակցություններին վերաբերող միջազգային պայմանագրերի նախապատրաստմանը, քննարկմանը, բանակցությունների վարմանը մասնակցությունը,

- օդանավակայանային գործունեության և օդային երթևեկության կազմակերպման, ինչպես նաև ավիացիայի բնագավառում շահագործվող վերգետնյա միջոցների և մատուցվող ծառայությունների ապահովության ու անվտանգության կանոնակարգումը և վերահսկողությունը,

- ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնելու համար համապատասխան սերտիֆիկատների, լիցենզիաների, վկայականների և թույլտվությունների տրամադրումը, օդանավերի թռիչքային պիտանության, աերոնավիգացիոն միջոցների և այլ ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմերի, օդային երթևեկության կարգավարների և օդանավերի տեխնիկական սպասարկման անձնակազմերի վկայականների տրամադրումը և վավերացումը,

- օտարերկրյա պետության ավիացիոն իշխանությունների կողմից տրված օդանավի անձնակազմի անդամների վկայականների ճանաչումը,

- քաղաքացիական ավիացիայի համակարգում գործունեություն իրականացնող բոլոր շահագործողների, կազմակերպությունների ու ընկերությունների շարունակական վերահսկողությունը և դրանց կողմից կատարվող աշխատանքների ու մատուցվող ծառայությունների որակի վերահսկողության տեսչական ստուգումների անցկացումը,

- Հայաստանի Հանրապետությունում օդանավերի երկրորդային հետևանքներ չառաջացրած աղետների դեպքում որոնողափրկարարական աշխատանքների համակարգումը,

- Օդանավ շահագործողի վկայականի տրամադրման, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օդանավերի պետական ռեգիստրի վարման շարունակականության ապահովումը,

- Քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի վարումը:

Քաղաքաշինություն

Քաղաքաշինությունը լինելով Հանրապետության տարածքային կազմակերպման ու զարգացման, ազգաբնակչության, արտադրողական ուժերի ու միջոցների տեղաբաշխման, բնակավայրերի ու միջբնակավայրային տարածքների կապերի, կառուցապատման ու հատակագծման հիմքը, ընդգրկում է տարածքային պլանավորման, բնակավայրերի կայուն զարգացման և ճարտարապետության, բնակարանային-կոմունալ տնտեսության, շինարարության և շինարարական արդյունաբերության, բնական և տեխնածին երևույթներից տարածքի պաշտպանության ոլորտները: 2016թ. քաղաքաշինության հիմնական խնդիրներն են համարվելու պետական սեփականություն հանդիսացող սոցիալական ոլորտի, այդ թվում՝ կրթական, մշակութային, և մարզական և առողջապահական օբյեկտների կապիտալ վերանորոգումը, վերականգնումն ու կառուցումը:

2016թ-ի բյուջետային տարում հիմնականում շեշտադրվել են բոլոր ծախսային ծրագրերի գծով շարունակական բնույթ ունեցող օբյեկտների (կրթական, առողջապահական, մարզական և մշակութային օբյեկտների հիմնանորոգում, շինարարություն և վերակառուցում) շինարարական աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մարզերի տարբեր համայնքներում առաջնահերթ լուծում ունեցող խնդիրներին ուղղված օբյեկտների շինարարական աշխատանքները:

2016 թվականին նախատեսվում է շարունակել կամ ավարտին հասցնել գոյություն ունեցող պարտավորությունները շինարարական ծախսային ծրագրերի ներքո՝ թվով 54 օբյեկտ: 2016թվականին կավարտվեն 44 օբյեկտ կամ 81.5%, մասնավորապես. կրթական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն՝ 35, որից 2016 թվականին կավարտվեն 31 օբյեկտ, մշակութային օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն՝ 13 օբյեկտ, որից 2016 թվականին կավարտվի՝ 1-ը, մարզական օբյեկտների հիմնանորոգում և շինարարություն՝ 5,

որից 2016 թվականին կավարտվեն 2-ը, առողջապահական օբյեկտների շինարարություն 1 օբյեկտ՝ շարունակական:

Արդյունքում կապահովվի ՀՀ մարզերի համաչափ զարգացման ծրագրերի իրականացումը կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահական բնագավառներում:

ՀՀ Նախագահի 2008 թվականի հուլիսի 30-ի ՆԿ-128-Ն կարգադրությամբ հաստատված ժամանակացույցով նախատեսված և ՀՀ Նախագահի 2012 թվականի ապրիլի 7-ից մայիսի 3-ը և 2013 թվականի հունվարի 21-ից փետրվարի 16-ը ՀՀ մարզերի տարբեր համայնքներ կատարած այցերի ընթացքում արծարծված առաջնահերթ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ցանկում ընդգրկված օբյեկտների շինարարական աշխատանքներն ու ծրագրերը կլինեն ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՀՀ կառավարության ուշադրության ներքո:

2016թ. քաղաքաշինության հիմնական խնդիրներից է նաև աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի իրականացումը՝

- Գյումրի, Վանաձոր, Սպիտակ քաղաք-ներում, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում ծրագրի շահառու ճանաչված 333 ընտանիքի (Գյումրի՝ 250, Սպիտակ՝ 50 և Ախուրյան 33) բնակարանային ապահովում՝ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանների գնման վկայագրերի (ԲԳՎ) միջոցով ֆինանսական աջակցության տրամադրմամբ,

-Ախուրյան համայքում ծրագրի շահառու ճանաչված 104 ընտանիքների համար համայնքում նախորդ տարիներին շինարարությունը սկսած 3 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքների վերսկսումը:

Ոլորտում իրագործվող ծախսային ծրագրերն ունեն ռազմավարական նշանակություն, որոնց հեռանկարային արդյունքները նպատակաուղղված են լինելու հատկապես ՀՀ մարզերում բնակչության զբաղվածության մակարդակի և ընդհանուր կենսամակարդակի բարձրացմանը, կրթության, մարզական, մշակութային և առողջապահական ոլորտներում վարվող միասնական քաղաքականության ապահովմանը:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

2016 թվականին արտակարգ իրավիճակների ոլորտի հիմնական խնդիրներն են.

- փրկարար ծառայությունում փրկարարական համակարգի կատարելագործումը և զարգացումը՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով հասարակական և կամավորական փրկարարական ուժեր, փրկարար ծառայողների մասնագիտական և հատուկ պատրաս-

տականության բարձրացումը, արագ արձագանքման փրկարարական ուժերի պատրաստականության բարձրացումը և տեխնիկական հագեցվածության ապահովումը,

- սեյսմիկ պաշտպանության ոլորտում ՀՀ մարզերի և համայնքների տարածքների սեյսմիկ ռիսկի գնահատում և նվազեցում: Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնելով ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրությունը, այնպես էլ սեյսմիկ անվտանգությունը,

- հիդրոօդերևութաբանության մոնիտորինգի ոլորտի աշխատանքները նպատակաուղղված են լինելու հիդրոօդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացմանը, դիտարկումների ծրագրային համակարգերը միջազգային չափանիշների մակարդակին և Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից ընդունված ստանդարտներին մոտեցնելուն, գործող սարքավորումների անխափան շահագործմանը, որն իր հերթին հնարավորություն կտա բարելավել հիդրոօդերևութաբանական սպասարկման որակը,

- մթնոլորտային երևույթների ակտիվ ներգործության ոլորտի աշխատանքները միտված են լինելու մթնոլորտային երևույթների արդյունավետ կառավարման և ռադիոլոկացիոն դիտարկումների իրականացման նպատակով մթնոլորտի և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության համալիրի զարգացմանը, կարկտահարություններից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների, այգիների պաշտպանությանը,

- արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառի մասնագետների պատրաստումը ու վերապատրաստումը՝ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան դարձնելով որպես տարածաշրջանային և մերձավոր արևելյան կենտրոն: Ուշադրության կենտրոնում են լինելու նաև շարունակական բնույթ ունեցող հանրային իրազեկման համակարգի կատարելագործման և զարգացման, այդ թվում բնակչության իրազեկման մեխանիզմների և միջոցների կատարելագործման միջոցառումները,

- մարդուն հրատապ օգնության համապետական համակարգի «911» դիսպետչերական ծառայության զարգացումը՝ ծառայության մատուցումը մոտեցնելով միջազգային չափանիշներին, իրավիճակների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվության հավաքման, մշակման, վերլուծության և առաջարկությունների նախապատրաստման համակարգի կատարելագործումը,

- պետական նյութական պահուստի համակարգի նյութական արժեքների կուտակումը, թարմացումը, փոխարինումը և պահպանումը,

- աղետների ռիսկի վերաբերյալ տվյալների հավաքագրման, վերլուծության և փոխանակման նպատակով աղետների ազգային դիտացանցի և աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի կատարելագործումը, ռիսկերի բազմակողմանի բացահայտումը և գնահատումը:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ Նախագահի ուրվագծած արտաքին քաղաքականության և նրա կողմից տրված հանձնարարականների հիման վրա ոլորտում իրականացվելիք գործունեությունը նպատակաուղղված է լինելու պետության զարգացման արտաքին բարենպաստ պայմանների ապահովմանը, արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումների ներկայացմանը, արտերկրում Հայաստանի և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում երկրի ներգրավվածության ընդլայնմանը, ինչպես նաև բարեկամ պետությունների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:

2016թ. արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն են համարվելու.

- Արցախյան հիմնախնդրի խաղաղ կարգավորումը,
- Արտաքին անվտանգության ռազմաքաղաքական բաղադրիչի ամրապնդումը,
- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը,
- Ռուսաստանի հետ դաշնակցային փոխգործակցության և ռազմավարական հարաբերությունների առավել խորացումն ու ընդլայնումը,
- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը,
- Եվրոպական երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումն ու ամրապնդումը,
- Անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի հետ հարաբերությունների առավել զարգացումը,
- Հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորումը,
- փոխշահավետ համագործակցության ծավալման ուղղությամբ իրական քայլեր ձեռնարկող ԱՊՀ մասնակից պետությունների հետ հարաբերությունների խորացումը,
- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Ասիայի այլ երկրների, Աֆրիկայի պետությունների հետ համագործակցության զարգացումը,
- Կանադայի, Հարավային և Կենտրոնական Ամերիկայի երկրների հետ համագործակցության զարգացումը,
- Մերձավոր Արևելքի ավանդական գործընկեր երկրների հետ փոխգործակցության զարգացումը,
-Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ծավալվող համագործակցությանն ակտիվ մասնակցությունը,

- ՀԱՊԿ-ի շրջանակում համագործակցության շարունակական խորացումը,

- Եվրոպական միության հետ հարաբերությունների զարգացումը և ընդլայնումը, ԵՄ հետ երկկողմ համագործակցության նոր իրավական շրջանակի ձևավորումը,

- ԱՊՀ շրջանակներում ընթացող գործընթացներին ակտիվ մասնակցությունը,

- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և այլ միջազգային կազմակերպություններում առավել ակտիվ ներգրավվածությունը և ՀՀ շահերի պաշտպանությունը,

- ՆԱՏՕ–ի հետ քաղաքական երկխոսության շարունակումը, Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի հետևողական իրականացումը,

- Միջազգային և տարածաշրջանային տնտեսական և ֆինանսական կառույցների հետ հարաբերությունների զարգացումը,

- Հայաստանի տնտեսական անվտանգության ապահովումը, հաղորդակցության ուղիների ապաշրջափակումը, զարգացումն ու դիվերսիֆիկացումը, հայրենական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտումը և արտաքին ներդրումների խրախուսումը,

- Մշակութային համագործակցության խթանումը, հայկական մշակութային ժառանգության պահպանումը,

- Միջազգային ասպարեզում ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումներն ավելի լսելի և ընկալելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացումը,

- Արտերկրում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունը::

Արդարադատություն

2016 թվականին ոլորտի առաջնային ռազմավարական նպատակները լինելու են՝

- Հանրապետության օրենսդրության որակի բարձրացումը և օրենսդրության մեջ ներքին հակասությունների բացառումը.

- Դատաիրավական համակարգի հետագա զարգացումը, դատական համակարգի անկախության և հասարակության հանդեպ հաշվետվողականության ապահովումը.

- Արդարադատության ակադեմիայի գործարկման աջակցությունը, ներառյալ համապատասխան ենթաօրենսդրական ակտերի մշակումը, ինչպես նաև տեխնիկական աջակցության տրամադրումը.

- Քրեակատարողական հաստատությունների բնականոն աշխատանքի և հետագա էվոլյուցիոն բարեփոխումների ապահովումը, ներառյալ Արմավիր քրեակատարողական հիմնարկի առաջին մաս-

նաշենքի շահագործումը՝ ԵԽ չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև քրեակատարողական ենթակառուցվածքի հետագա զարգացումը.

- Գործարար միջավայրի հետագա զարգացումը՝ քաղաքացիական օրենսգրքում փոփոխությունների և լրացումների կատարումն ժամանակակից մոտեցումներին համապատասխանեցնելու նպատակով.
- Էլեկտրոնային քաղաքացիական ռեգիստրի (էլ. ՔԿԱԳ) համակարգերի հետագա զարգացումը՝ էլ ՔԿԱԳ համակարգի թղթային արխիվների թվայնացման շարունակականության ապահովումը.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ իրեն վերապահված իրավասությունների կատարման բնականոն ապահովումը.
- Ամբողջությամբ ծրագրային բյուջետավորման համակարգին անցումն ապահովելը.

Նախատեսվում է ավարտին հասցնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նոր օրենսգրքի մշակման աշխատանքները, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և մի շարք այլ իրավական ակտերի նախագծեր:

- Շարունավկելու են բարեփոխումները քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղությամբ, մասնավորապես՝ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի համաձայն մշակել նոր քրեակատարողական օրենսգիրք: Քրեական արդարադատությանն ուղղված բարեփոխումներ են իրականացվելու պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգերում, սահմանվելու են պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգեր:
- 2016թ. կշարունակվեն քրեակատարողական ոլորտի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն իրավական դաշտի վերանայմանը, օրենքների և ենթաօրենսդրության կիրարկման կատարելագործմանը, ազատազրկված անձանց թվի կրճատմանը, ազատազրկման արժանապատիվ պայմանների երաշխավորմանը, նոր քրեակատարողական հիմնարկների կառուցմանը, ազատազրկվածների հետ տարվող սոցիալ-իրավական աշխատանքների շրջանակի

ընդլայնմանը, կադրային ռեսուրսների կառավարման և վերապատրաստման, ինչպես նաև քրեակատարողական համակարգում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

- Կհստակեցվեն պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու դրանց չափորոշիչները: Միջազգային չափանիշներին համապատասխան կսահմանվեն քրեակատարողական հիմնարկներում հացադուլ իրականացնող անձանց իրավունքներն ու պարտականությունները:
- Առաջնային խնդիրներից է հանդիսանալու քրեակատարողական համակարգից անկախ պրոբացիոն ծառայության արդյունավետ գործարկումը:
- Իրավական և համակարգային բարեփոխումներ կիրականացվեն նաև նոտարական համակարգում, որոնք ուղղված կլինեն մատուցված ծառայությունների որակի բարձրացմանը և ծառայությունների մատուցման ժամկետների նվազեցմանը:
- Կշարունակվեն դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում իրականացվող տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և հարկադիր կատարողի մի շարք գործառույթների ավտոմատացման գործընթացները, որպես առաջնային խնդիր դիտարկելով կատարողական վարույթների ժամկետների նվազեցումը և կատարողական թերթի վերացումը:
- 2016թ. քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում կշարունակվեն իրականացվել բարեփոխումներ՝ ուղղված համակարգի թվայնացմանն ու ծառայությունների որակի բարձրացմանը:
- Արդարադատության համակարգում իրականացվելիք բարեփոխումների ուղղություններից է լինելու անվճար իրավաբանական օգնության ինստիտուտի կատարելագործումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության գերակա խնդիրներից մեկը քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է: Այն ներառում է նախևառաջ մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ ժամանակահատվածի, ներգրավված պետական օղակների քանակի կրճատումը, քաղաքացի-պետական ծառայող շփումների նվազագույնի հասցնելը, ծախսատարության կրճատումը, կոռուպցիոն ռիսկերի բացառումը: Այդ առումով նախատեսվում է Երևան քաղաքում և մարզերում քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, անձնագրային և վիզաների, անշարժ և շարժական գույքի կադաստրի ծառայությունների տրամադրման համար միասնական «մեկ պատուհան» սկզբունքի ներդրում, ինչը ենթադրում է նշված ծառայությունների ողջ փաթեթի հաճախորդներին մեկ պատուհանի միջոցով տրամադրում:

Սփյուռք

Ոլորտի 2016թ. առաջնահերթություններն են համարվելու հետևյալ միջոցառումներն ու ծրագրերը.

- Հայաստան-Սփյուռք գործակցության առանձին խնդիրների օրենսդրական կարգավորումը, համահայկական կազմակերպությունների և սփյուռքի տեղական կառույցների հետ գործակցության նոր կառուցակարգերի ներդրումը,

- սփյուռքում գործող տարածաշրջանային հանձնախմբերի և համայնքային կառույցների հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների մշակումն ու իրականացումը,

- տարբերակված մոտեցումների որդեգրումը՝ հաշվի առնելով տարածաշրջանների առանձնահատկություններն ու առաջնահերթությունները, նպատակային ծրագրերի ներդրումը՝ որոնք ուղղված կլինեն հայության տարբեր հատվածների, համայնքների կարիքների բավարարմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում հայտնված սփյուռքահայերին աջակցության հայեցակարգի մշակումը,

- երկքաղաքացիության ինստիտուտի արդյունավետ կիրարկման ապահովումը, հայրենադարձության գործընթացի իրավական հիմքերի ընդլայնման շարունակումը, գործուն ու արդյունավետ կառուցակարգերի ներդրումը՝ հայրենիք վերադարձող սփյուռքահայերի, այդ թվում՝ սիրիահայերի հասարակությանն ինտեգրումն արագացնելու համար, Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի առավելագույնս ներգրավման, ներդրումների խրախուսման և ծավալների մեծացման նպաստավոր միջավայր ստեղծելու համար միջոցների ձեռնարկումը.

- սփյուռքահայ երիտասարդների Հայաստանի Հանրապետություն և ԼՂՀ այցելությունների կազմակերպմանը աջակցումը,

- բռնի կրոնափոխ եղած, ծպտյալ հայերին ազգային արմատներին վերադարձնելու, ինչպես նաև մշակութային և ճանաչողական ծրագրերի մշակումը և իրականացումը,

- կրթամշակութային, գիտահետազոտական ծրագրերի իրականացումը՝ սփյուռքի երիտասարդության շրջանում մայրենի լեզվի ուսուցման, կիրառման, արևմտահայերենի պահպանման ու զարգացման համար, ինչպես նաև ազգային արժեհամակարգի պահպանման և վերարտադրության նպատակով աջակցումը սփյուռքի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների ստեղծմանը, սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստմանը,

- Հայաստանում և սփյուռքում մասնագիտական, այդ թվում՝ գիտական, կրթական, տնտեսական համաժողովների կազմակերպումը,

- հայկական կազմակերպությունների հետ մշակութային փառատոնների, ձեռնարկների, մարզական խաղերի միջոցով երիտասարդության ազգային ոգին բարձրացնելու և հայրենիքը ճանաչելի դարձնելու գործընթացի համատեղ շարունակումը,

- հանրային հեռուստատեսության արբանյակային հեռարձակումներում հայապահպանական և ուսուցողական ծրագրերի ընդլայնմանը, այդ ծրագրերի որակի ու բովանդակության բարելավման աջակցումը՝ ավելացնելով համագործակցությունն այլ հեռուստաալիքների հետ,

- վիրահայության շրջանում, այդ թվում՝ Ջավախքի հայկական համայնքներում հայապահպանությանը, մայրենի լեզվի ու մշակույթի պահպանմանը նպաստող ծրագրերի իրականացման շարունակումը:

Կրթություն

Մարդկային զարգացման ապահովման քաղաքականության հիմնական գերակայությունը կրթության կայուն զարգացման ապահովումն է՝ կրթության որակի, արդյունավետության և մատչելիության բարձրացման միջոցով: Պետական քաղաքականության մեջ կրթությունը գերակայությունների շարքում շարունակում է մնալ որպես ազգային արժեք և երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացն ապահովող կարևոր գործոն:

Հանրակրթության ոլորտում կշարունակվեն հիմնական բարեփոխումները, որոնց նպատակներն են միջնակարգ կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը միջնակարգ դպրոցի բոլոր, հատկապես՝ ավագ դպրոցի մակարդակներում, ինչպես նաև համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Նախադպրոցական ծրագրերի իրականացման համար ՀՀ պետական բյուջեից միջոցներ կհատկացվեն ՀՀ մարզերին, Երևանի քաղաքապետարանին:

Շարունակվելու են տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին անվճար դասագրքերով ապահովելու քաղաքականությունը:

Ավագ դպրոցի կայացման համար կմշակվեն ծրագրեր կրթահամակարգի ավելի բարձր օղակների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Շարունակվելու են նաև հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման աշխատանքները:

«Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակներում սննդով կապահովվեն ՀՀ Արարատի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերում հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և դպրոցի նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաները:

Կշարունակվի ուսուցիչների վերապատրաստման գործընթացը՝ ապահովելով նրանց մասնագիտական հմտությունների բարձրացումը և որակավորման համապատասխանեցումը որոշակի չափորոշիչների, իսկ ուսուցիչների ատեստավորման կարգի կիրառմամբ նախատեսվում է մեծապես նպաստել հանրակրթության որակի բարձրացմանը:

ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով շարունակվելու են ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները:

Ներառական կրթությաւն մեջ կընդգրկվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 5000 երեխաներ:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտի զարգացման և կատարելագործման նպատակով շարունակվելու են արտադպրոցական կրթական նոր ծրագրերի մշակման և ներդրման գործընթացները, որոնք կնպաստեն սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը: Նախազորակոչային տարիքի պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության բարելավման նպատակով կիրականացվի ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարությունը:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կշարունակվի «Ազգային երգ ու պար» առարկան, որի նպատակն է ազգային արժեքների պահպանումը և փոխանցումը սերունդների միջոցով՝ սերունդներին, արժեհամակարգի ձևավորումը, հայրենասիրության սերմանումը, հայեցի մտածողության պահպանումը:

«Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության գործունեությամբ ՀՀ-ում գործող դպրոցների միջև կստեղծվի համագործակցության ցանց, որը հնարավորություն կընձեռի առաջավոր փորձի փոխանակման և նորարարությունների ներդրման համար:

Կիրականացվի նաև Կրթության գերազանցության ազգային ծրագիրը, որը կնպաստի հանրակրթության որակի բարձրացմանը և հանրակրթության համակարգի արդյունավետ գործունեությանը:

«Դպրոցներում ռոբոտատեխնիկայի զարգացման իրականացում» ծրագրի շրջանակներում աշակերտներին հնարավորություն կընձեռվի ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրա-

վորման և ռոբոտատեխնիկայի հիմունքները, որի արդյունքում կզարգանա նրանց ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատաոճն ու համագործակցության ձգտումը:

Մասնագիտական կրթության բնագավառում, Բոլոնիայի և Կոպենհագենի գործընթացների սկզբունքներին համապատասխան, կիրականացվեն մի շարք նախաձեռնություններ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Մասնագիտական կրթության ոլորտի իրականացվելիք բարեփոխումների հիմնական նպատակներն են լինելու՝ կրեդիտների կուտակման ու փոխանցման համակարգերի կատարելագործումը, սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների համար սոցիալական և ֆինանսական աջակցության ծրագրերի ընդլայնումը, պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդնումը՝ բուհերի հավատարմագրման արդյունքներից կախված, եվրոպական բարձրագույն կրթական տարածքի ինտեգրման սկզբունքների իրականացումը, ՀՀ պետական և ոչ պետական բուհերի գործունեության համար առողջ մրցակցային դաշտի և հավասար հնարավորությունների ստեղծումը: Շարունակվելու են նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրման աշխատանքները:

Սփյուռքի հետ տարվող աշխատանքները հիմնականում ուղղված կլինեն աջակցելու Սփյուռքի կրթօջախների գործունեությանը՝ նպաստելով հայապահպանման խնդիրների լուծմանն ու միջմշակութային երկխոսության զարգացմանը: Վենետիկի Կա՛Ֆոսկարի համալսարանում կկազմակերպվեն հայոց լեզվի դասընթացներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվում է շարունակել աջակցել կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներին:

Գիտության ոլորտ

Ոլորտի 2016թ. նպատակներն են լինելու.

- գիտության բնագավառի բնականոն գործունեության ու առաջանցիկ զարգացման ապահովումը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության, մրցունակության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

- հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորմանը նպաստելը,

- գիտության, կրթության և արտադրության ինտեգրմանը նպաստումը,

Ոլորտի խնդիրներն են.

- գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը,

- գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման ժամանակակից համակարգի ձևավորմանը նպաստելը,

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի ժամանակակից ենթակառուցվածքի ու տեղեկատվական համակարգի ձևավորմանն ու զարգացմանը, միջազգային գիտատեխնիկական համակարգին ինտեգրման ապահովմանն աջակցելը,

- գիտության բնագավառի հայեցակարգերի, ռազմավարությունների, զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակումը և մոնիթորինգը,

- գիտության համակարգի գործունեության որակի և արդյունավետության մոնիթորինգը,

- գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքի առևտրայնացմանը և տնտեսության մեջ ներդրմանն աջակցելը:

Գիտության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը հանրապետությունում գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծմանը նպաստելն է: Բարեփոխումները պետք է նպատակաուղղված լինեն ինչպես գիտության ոլորտի կադրային ներուժի արդյունավետ վերարտադրության ապահովմանը, ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացմանը և միջազգային համագործակցության զարգացմանը, այնպես էլ գիտական կազմակերպությունների աշխատանքների նորովի կազմակերպմանը, գիտական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը և գիտության ոլորտի ֆինանսավորման արդյունավետության բարձրացմանը: Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

- ձևավորել գիտության և տեխնոլոգիաների ոլորտում միասնական քաղաքականության ու կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգ,

- բարձրացնել գիտությանն ուղղվող ֆինանսավորման ծավալների օգտագործման արդյունավետությունը,

- ներդնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ,

- ներդնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության և բյուջետային ֆինանսավորման ծավալների համապատասխանեցման մեխանիզմները,

- ներդնել գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ու ներգրավման մեխանիզմներ,

- բարձրացնել գիտական հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման մեջ բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնակցության մակարդակը,

- ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,

- գիտության ոլորտի ենթակառուցվածքները և նյութատեխնիկական բազան համապատասխանեցնել գիտության և տեխնիկայի զարգացման արդի չափանիշներին,

- նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու այդպիսի գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանը,

- նպաստել գիտական հետազոտությունների և մշակումների ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության մակարդակի բարձրացմանը և այդպիսի մասնակցության տնտեսական խրախուսման մեխանիզմների ձևավորմանը:

ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծով հաստատվելիք հատկացումների շրջանակում նախատեսվում է.

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացում,

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացում,

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման իրականացում,

- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (դրամաշնորհների) ֆինանսավորման իրականացում,

-գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման իրականացում,

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանի պահմանման իրականացում: Գրադարանային ծառայությունների, գիտական ամսագրերի և մենագրությունների տպագրության իրականացում:

ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծի գիտության մասով ընդգրկված ծրագրերը միտված են գիտության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, գիտական ներուժի երիտասարդացմանը, գիտահրատարակչական գործունեության և գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը և գիտական ու գիտատեխնիկական բնագավառում միջազգային համագործակցության խթանմանը:

Առողջապահություն

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է լինելու հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը: Իրականացվող ծրագրերը շարունակելու են շեշտադրել առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովումը: Առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջապահական, վերարտադրողական առողջության պահպանման ծառայությունները լինելու են պետության առաջնահերթությունը:

Հանրային առողջապահական ծառայությունների հզորացման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովելու է հանրային առողջապահության միասնական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, օրենսդրական դաշտի բարելավումը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրությունը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Աշխատանքներ են տարվելու արտակարգ իրավիճակներին արձագանքելու գործընթացի բարելավման, համընդհանուր լաբորատոր ցանցի ստեղծման և լաբորատոր համակարգի շարունակական զարգացման, առողջ ապրելակերպի քարոզչության, առողջության պահպանման, աշխատողների առողջության պահպանման հիմնական կանոնների ու նորմերի սահմանման և կիրառման ուղղություններով:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման ոլորտում բժշկական օգնության կազմակերպման որակի բարձրացման առումով՝ բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով փուլ առ փուլ ներդրվելու են ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման չափորոշիչները, ապահովվելու է հիվանդությունների ճշգրիտ և վաղ ախտորոշումը, որակյալ բուժումը, վերականգնողական շրջանի պատշաճ վարումը: Հիմնանորոգվելու, կառուցվելու և սարքավորումներով հագեցվելու է, միջազգային չափանիշներին համապատասխան, արյունաբանական կենտրոնը՝ ներառյալ ոսկրածուծի փոխպատվաստման ծառայությունը: Կառուցվելու և սարքավորումներով հագեցվելու է Ռադիոիզոտոպների ազգային կենտրոնը, ինչը ժամանակակից գիտական մեթոդներով նորագոյացությունների հայտնաբերման, ախտորոշման և որակյալ բուժման հնարավորություն կընձեռի: Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակելու է մարզային բժշկական կազմակերպությունները (առողջության պահպանման առաջնային օղակի և հիվանդանոցային) վերանորոգելու, վերակառուցելու և վերազինելու ծրագրի իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները: Աշխատանքներ են իրականացվելու ոլորտը նորագույն սարքավորումներով վերազինելու և միասնական էլեկտրոնային համակարգ ներդնելու ուղղություններով:

Բժշկական օգնության մատչելիության ապահովման նպատակով շարունակվելու է առողջապահության ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակումը և կատարելագործումը, վերանայվելու է պետական պատվերի տրամադրման ընթացակարգը: Աշխատանքներ են իրականացվելու բնակչության անապահով և սոցիալապես առավել խոցելի խմբերի համար բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացման ուղղությամբ: 2016 թվականին շարունակվելու և ընդլայնվելու է սրտի անհետաձգելի անվճար վիրահատությունը ՝ Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար::

Առողջության առաջնային պահպանման գործառույթ իրականացնող բժշկի (տեղամասային թերապևտ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ) գործառույթները՝ առավելագույնս ուղղվելու են հիվանդությունների վաղ հայտնաբերմանն ու կանխարգելմանը: Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի կողմից իրականացվելու են հիվանդությունների վաղ հայտնաբերման և ախտորոշման նպատակով սկրինինգային ծրագրեր:

Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպաստելու է մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը, ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով ապահովելու է մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացումը: 2016 թվականին շարունակվելու է «Երեխաների առողջ սնուցում» հանրային իրազեկման ծառայություններ», «Անպտուղ զույգերի վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայություններ» ծրագրերը, բարելավվելու է մոր ու մանկան առողջության պահպանման ոլորտում տրամադրվող բուժօգնության որակը, մատչելիությունն ու հասանելիությունը, ընդլայնվելու է մատուցվող ծառայությունների, ներառյալ նորածնային սկրինինգ ծրագրերի փաթեթը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ արտերկրի առաջատար կլինիկաներում վերապատրաստումների կազմակերպման և շարունակական մասնագիտական զարգացման միջոցով:

Ներդրվելու են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար: Իրականացվելու են աշխատանքներ բուժաշխատողների պաշտպանվածության մակարդակի բարձրացման ուղղությամբ՝ նրանց համար ներդնելով սոցիալական և իրավական պաշտպանվածության երաշխիքներ:

Բարձրացվելու է մասնագիտական հասարակական կազմակերպությունների դերն առողջապահության ոլորտի աշխատուժի որակավորման, հսկողության, շարունակական մասնագիտական զարգացման ապահովման ոլորտներում:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում՝

Աշխատանքներ կիրականացվեն հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով: Բարձրացվելու է պետական կարիքների համար դեղորայքի գնումների գործընթացի արդյունավետությունը: Ներդրվելու է առողջապահական ծառայությունների, դեղերի և դեղամիջոցների ծավալների, գների և ֆինանսական հոսքերի հաշվառման համակարգ: Միջոցներ են ուղղվելու սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց դեղապահովմանը, ներդրվելու են մեխանիզմներ սոցիալական առանձին խմբերի համար դեղորայքի մատչելիության ապահովման նպատակով:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

2016 թվականին լուրջ քայլեր կձեռնարկվեն կենսաթոշակային, զբաղվածության, հաշմանդամության բնագավառներում բարեփոխումների և ինտեգրված սոցիալական ծառայությունների կայացման ուղղությամբ, միաժամանակ կշարունակվեն բնակչության զբաղվածության, տարեցների, հաշմանդամների, երեխաների և կանանց հիմնահարցերի, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը ուղղված նպատակային ծրագրերը և դրանց մոնիթորինգն ու գնահատումը: Կշարունակվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ՝ սոցիալական պաշտպանության համակարգը եվրոկառույցների ամրագրած հիմնարար սկզբունքներին համահունչ դարձնելու նպատակով:

Սոցիալական աջակցության բնագավառում նախատեսվում է պետական նպաստների քաղաքականության մեջ շարունակել ընտանիքների անապահովության գնահատման ծրագրի հասցեականության մեծացմանն ուղղված միջացառումների իրականացումը՝ մասնավորապես առցանց եղանակով ստացվող անհրաժեշտ տվյալների շրջանակի հնարավոր ընդլայնում, համադրումներ տարբեր տեղեկատվական բազաների տվյալների հետ՝ նպաստառության ոչ ենթակա ընտանիքների հայտնաբերման նպատակով: Աշխատանքներ են տարվելու նաև աղքատ ընտանիքների հայտնաբերման և նրանց ծրագրում ընդգրկելու ուղղությամբ:

2016 թվականին կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ կտրամադրվի 104685 ընտանիքների, իսկ նպաստի միջին ամսական չափը կկազմի 30537.6 դրամ:

2016 թվականին երեխայի խնամքի նպաստի չափերը կմնան անփոփոխ: Շարունակվելու է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրումը:

Շարունակվելու են սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց կացարանի խնդրի լուծման նպատակով սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման, կացարանի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հասցեական ծրագրերի իրականացման աշխատանքները:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի կայուն զբաղվածությանը նպաստող ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող մեխանիզմների կատարելագործմանը: Այս առումով նախատեսվում է.

- աշխատանքային օրենսդրության կատարելագործում, այդ թվում՝ աշխատանքային հարաբերությունների կարգավորման մեխանիզմների հստակեցում և միջազգային պայմանագրերով ամրագրված պահանջներին համապատասխանեցում.
- Զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությամբ սահմանված թիրախներին համահունչ, ինչպես նաև հիմք ընդունելով զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի և նրանում ներառված ծրագրերի մոնիթորինգի և գնահատման արդյունքները, կյանքի կոչելու զբաղվածության քաղաքականության նոր մոդելը: Այս համատեքստում առանձնապես կարևորվում են զբաղվածության պետական կարգավորման ակտիվ ծրագրերի միջոցով աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովման կարիքների գնահատումը և դրա հիման վրա նրանց մրցունակության հետևողական բարձրացման արդյունքում հարմար աշխատանքով ապահովումը: Նախատեսվում է զբաղվածության պետական կարգավորման թվով 16 ծրագրի իրականացում ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում: Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության միասնական համակարգի և պետական աշխատողներին տրամադրվող սոցիալ-աշխատանքային երաշխիքների (սոցիալական փաթեթի) մեխանիզմների կատարելագործում՝ ելնելով իրավակիրառական պրակտիկայում առաջ եկած խնդիրներից,
- Սոցիալական գործընկերության խորացման ճանապարհով աշխատանքի արդյունավետության խթանում և սոցիալ-աշխատանքային երաշխիքների ամրապնդում:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում իրականացվելիք քաղաքականության հիմնական ուղղությունը լինելու է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրականացումն ապահովելը, միաժամանակ, կշարունակվեն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի, դաստիարակության,

ուսման և ֆիզիկական զարգացման նպատակով նպաստավոր պայմանների ստեղծման աշխատանքները:

«Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում կշարունակվի 660 երեխայի խնամքն ու դաստիարակությունը մանկատներում:

Մանկատների շրջանավարտների համար կշարունակվի «Ակունք» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» և «Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում» միջոցառումները:

«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ» ծրագրի շրջանակներում սոցիալապես անապահով ընտանիքների 730 երեխա կխնամվի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ընտանիքում ապրելու իրավունքը ապահովելու, նրանց խնամքի այլընտրանքային ծառայություններ տրամադրելու նպատակով շարունակվելու են իրականացվել «Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների երեխաներին սոցիալական ծառայությունների տրամադրում», «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» և «Հաշմանդամ երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների մատուցում Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 92 ներառական մանկապարտեզում» միջոցառումները:

Շուրջօրյա հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման, երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից երեխաների բեռնաթափման և հաստատություններից ընտանիքներ երեխաների տեղավորման նպատակով կշարունակվեն «Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում», «Առավոտ» ՀԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ» և «Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումները:

Կշարունակվի նաև թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման ծրագրով նախատեսված միջոցառումները:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն իրականացվել հաշմանդամների սոցիալական ներառմանն ուղղված աշխատանքները: Դրանք միտված կլինեն ոլորտի օրենսդրության կատարելագործմանը, հաշմանդամություն ունեցող անձանց համար

հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, զբաղվածության խթանմանը, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով, այդ թվում՝ ձայնաստեղծ սարքերով, աչքի պրոթեզներով,սայլակներով և լսողական սարքերով, եվրոպական արտադրության լսողական սարքերի ձեռքբերման համար հավաստագրերով, բրայլյան և «Խոսող գրքերով» ապահովմանը:Կշարունակվեն նաև աշխատանքները՝ ուղղված բժշկասոցիալական և հոգեկան առողջության վերականգնմանը:

Պետական աջակցություն է ցուցաբերվելու «Փրկություն» հասարակական կազմակերպությանը՝ ցերեկային կենտրոնում հաշմանդամություն ունեցող երիտասարդների սոցիալ-վերականգնողական աշխատանքներն իրականացնելու համար: 2016 թվականից պետական աջակցություն կցուցաբերվի նաև «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությանը՝ ցերեկային կենտրոնում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված ծառայություններ մատուցելու համար: Կշարունակվեն անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման նոր չափորոշիչների մշակման, դրանց փորձարկման և տեղայնացման աշխատանքները:

2016 թվականին կշարունակվեն իրականացվել աշխատանքները տարեցների համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու ուղղությամբ: Գործող չորս տուն-ինտերնատներում և մեկ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնում կխնամվեն 1210 միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիներ, տնային պայմաններում կսպասարկվեն շուրջ 4000 միայնակ ծեր ու հաշմանդամ քաղաքացիներ, իսկ ավելի քան 1800 կենսաթոշակառու կհաճախի խնամքի ցերեկային կենտրոններ:

Կշարունակվի 2012 թվականից մեկնարկած՝ «Ծերացման հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության դրույթների իրականացման գործընթացը, որի շրջանակներում կներդրվեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունները, աշխատանքներ կտարվեն տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները վճարովի, համավճարով և անվճար հիմունքներով տրամադրելու ուղղությամբ:

Կշարունակվի նաև սոցիալական սպասարկման ծառայությունների պատվիրակումը հասարակական կազմակերպություններին, մասնավորապես՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը և «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամին: Կարևորելով անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովման, նրանց տարբեր սոցիալական խնդիրների լուծման, առաջին բժշկական օգնության ցուցաբերման, ընտանիքի հետ կապի վերա-

կանգնման, աշխատանքի տեղավորման և սոցիալական ինտեգրման հարցերը՝ շարունակվում է պետական աջակցության ցուցաբերումը «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամին՝ անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանի գործունեության իրականացման համար, որտեղ սպասարկվում է 100 անօթևան անձ:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում 2016 թվականին շարունակական բնույթ կկրեն կենսաթոշակառուներին մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու, կենսաթոշակային համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու, ինչպես նաև օրենսդրության միատեսակ կիրառումն ապահովելու, ՀՀ պետական բյուջեից կատարվող վճարումների հասցեականությունը բարձրացնելու նպատակով այլ տեղեկատվական համակարգերի հետ տեղեկատվության փոխանակման ընթացակարգերը կատարելագործելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Միաժամանակ, աշխատանքային կենսաթոշակների հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի չափերը 2016 թվականին կմնան անփոփոխ, համապատասխանաբար՝ 16000 դրամ, առաջին տասը տարվա համար՝ 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ:

2016 թվականին անփոփոխ կմնան սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանված հիմնական կենսաթոշակի (16000 դրամ) և զինծառայության ստաժի մեկ տարվա արժեքի (1500 դրամ) չափերը:

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համաձայն նշանակվող կենսաթոշակները ևս կհաշվարկվեն 2015 թվականի համար սահմանված հիմնական կենսաթոշակի չափով (14000 դրամ) և մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքով (5000 դրամ):

2016 թվականին անփոփոխ կմնան նաև ծերության հաշմանդամության և կերարողին կորցնելու դեպքում նպաստների չափերը: Սոցիալական (ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում) նպաստի միջին ամսական չափը կկազմի շուրջ 17868 դրամ (2015 թվականին ՝ շուրջ 17766 դրամ, աճը՝ շուրջ 0.6%):

2016 թվականին չի փոխվի նաև շարքային կազմի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանված չափերը, արդյունքում կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի շուրջ 24847 դրամ (2015 թվականին՝ շուրջ 25025 դրամ, նվազումը՝ 0.7%): :

Զոհված և մահացած զինծառայողների ընտանիքների անդամներին և հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող անձանց տրվող պարգևավճարի չափերը ևս 2016 թվականին չեն փոխվի:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում 2016 թվականին մայրության նպաստ կվճարվի շուրջ 30000 չաշխատող կանանց, որի չափը հաշվարկվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի հիսուն տոկոսից և 55000 դրամ նվազագույն ամսական աշխատավարձի դեպքում կկազմի 126645 դրամ:

Ժողովրդագրության բնագավառում.

Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության իրավական դաշտի հետագա կատարելագործման, ինչպես նաև ժողովրդագրական բացասական միտումների կանխման, հետևանքների մեղմացման և ժողովրդագրական իրավիճակի կայունացման նպատակով 2016 թվականին կիրականացվեն միջոցառումներ հետևյալ ուղղություններով՝

- «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի հետագա կատարելագործում և ավելի մեծ թվով երիտասարդ ընտանիքների ընդգրկում,
- բնակարանով ապահովման ծրագրի (սոցիալական բնակարանային ֆոնդի) ներդրման համար անհրաժեշտ կառուցակարգերի մշակում,
- Տարիքային տարբեր խմբերի պատկանող երիտասարդ կանանց և մայրերի համար ծնող լինելու և ուսումնական ու աշխատանքային գործունեության համատեղման համար նպաստավոր պայմանների ստեղծում:
- Կշարունակվեն նաև ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունների շուրջ հանրային իրազեկման միջոցառումները:

Մշակույթի ոլորտ

2016թ. ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

- մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանությունը և ազգային ավանդույթների վերարտադրումը,

- ազգային հենքի վրա ժամանակակից արվեստի զարգացումը, մշակութային արտադրանքի տարածումը, ստեղծագործող երիտասարդության ներուժի բացահայտումը և ստեղծագործական գործընթացների խթանումը,

- մշակութային կրթության շարունակականությունը, համակարգի կատարելագործումը, գեղարվեստական կրթության համակարգի զարգացումը, մանուկների և պատանիների գեղագիտական դաստիարակության ապահովումն ու խթանումը,

- գրահրատարակչության, տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցումը,

- մշակութային ծառայությունների ապակենտրոնացումը և համաչափության ապահովումը,

- միջազգային համագործակցության ընդլայնումը, արտերկրում հայկական մշակույթի տեղորոշումը և հանրահռչակումը,

- ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանումը:

Կշարունակվեն *մշակութային ժառանգության* պահպանությանն աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ՀՀ մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը, վերականգնմանը ու սերունդներին փոխանցմանը, դրանց նպատակային օգտագործմանը ու հանրահռչակմանը:

Թանգարանների ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն՝ առկա մշակութային արժեքների և հավաքածուների հաշվառմանը (հավաքածուների մեջ ընդգրկում, դասակարգում), գիտական ուսումնասիրությանը (տեղեկույթի հավաքագրում, դրանց նկարագրում, վավերագրերի կազմում), համալրմանը, պահպանությանը, պաշտպանությանը (թանգարանային առարկաների վերականգնում, ամրակայում, համապատասխան ռեժիմների ստեղծում) և հանրահռչակմանը:

Գրադարանների ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն գրադարանային հավաքածուների պահպանությանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացի՝ մշակութային ժառանգության թվայնացման, տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված համակարգերի շարունակական զարգացմանը, համալրման անընդհատության ու օգտագործման մատչելիության ապահովմանը, տպագիր նյութերի, ազգային անձեռնմխելի ֆոնդերի վերաբերյալ մատենագիտության, կենսամատենագիտության, վիճակագրական տվյալների, տեղեկատվական ցանկերի կազմմանն ու հրապարակմանը, հանրության կողմից դրանց լիարժեք օգտագործմանը, մատչելիության ապահովմանը և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Հուշարձանների պահպանության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն պատմամշակութային հուշարձանների հաշվառմանը, ուսումնասիրմանը, պահպանությանը, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը, մշակութային զբոսաշրջության խթանմանը:

***Ոչ նյութական մշակութային ժառանգության ոլորտում* իրականացվող** ծրագրերը նպատակաուղղված են լինելու ոչ նյութական մշակութային ժառանգության՝ հանրության, խմբերի, որոշ դեպքերում առանձին անձանց կողմից որպես իրենց մշակութային ժառանգության մաս ճանաչված, կենցաղում հաստատուն տեղ զբաղեցնող սովորույթների, ավանդույթների, ծեսերի, պատկերացումների, գիտելիքների ու հմտությունների պահպանությանը, կենսունակության

ապահովմանը, պաշտպանությանը, հանրահռչակմանը: Նպատակին կծառայեն ՀՀ մարզերում ավանդական արհեստագործության ուսուցման, հմտությունների և գիտելիքների փոխանցման ծրագիրը, հանրապետական ձևաչափով նախատեսվող մրցույթ-փառատոնների իրականացումը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերում հայկական ավանդական մշակույթի ներառման նպատակով հայտերի ներկայացումը, ինչպես նաև տեղեկույթի տարածման ու մատչելիության ապահովման միջոցառումների կազմակերպումը:

Ժամանակակից արվեստի ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն ազգային հենքի վրա հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կինոարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահռչակմանը, քաղաքացիական կիրթ հասարակության ձևավորմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրման աջակցմանը, նրանց ստեղծագործական ներուժը հայ արվեստի զարգացմանն ուղղորդելու հնարավորությունների ստեղծմանը, մշակութային արտադրանքի ձեռքբերմանը և ազգային նկարագրով անհատների և երևույթների արժեքավորմանը և հանրայնացմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

Գրահրատարակչության ոլորտում իրականացվող ծրագրերի նպատակն է լինելու տպագիր արտադրանքի տեսքով պահպանել, տարածել և հանրահռչակել ազգային և համաշխարհային հոգևոր-մշակութային ժառանգությունը ներկայացնող գրքերը և էլեկտրոնային կրիչները, նպաստել ազգաբնակչության իրազեկվածությանը՝ հանրագիտարանային, գիտական, ճանաչողական և տեղեկատվական արժեք ներկայացնող գրականության հրատարակման միջոցով, աջակցել ժամանակակից հետազոտողներին և ստեղծագործողներին, նոր ուսումնասիրություններին ու ստեղծագործություններին, համատեղ հրատարակությունների և հատուկ կարևորության գրականության հրատարակմանը, ՀՀ տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին՝ պահպանելու իրենց ազգային լեզուն և գրականությունը, ապահովել գրական, մշակութային, մարզային և այլ բնույթի մամուլի շարունակականությունը:

Մշակութային կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը նպատակաուղղված կլինեն կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, ներառյալ

սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը:

ՀՀ մարզերում մշակութային ծառայությունների ապակենտրոնացման և համաչափության ապահովման նպատակով իրականացվող ծրագրերն ուղղված են լինելու Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող մշակութային ծառայությունների քանակական և որակական տարբերությունների վերացմանը, մարզերում մշակութային կյանքի աշխուժացմանը, միջմարզային կապերի ամրապնդմանը, մշակութային գործընթացներում տեղի ազգաբնակչության ներգրավմանը, մշակութային ծառայություններից օգտվելուն և մշակութային գործունեության իրականացմանը:

Մշակույթի ոլորտում միջազգային համագործակցությունը միտված է լինելու արտերկրի հետ մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը, դրանց ներդաշնակ համադրմանը, արտերկրում մշակույթի նպատակաուղղված քարոզչության իրագործմանը, համաշխարհային մշակույթը Հայաստանի հանրության լայն շերտերի համար մատչելի դարձնելու գործընթացների ապահովմանը, համատեղ և համաֆինանսավորվող ծրագրերի ավելացմանը, միջազգային ծրագրերին հայաստանյան կազմակերպությունների ներգրավվածության աճի ապահովմանը, հայաստանյան հասարակությանն աշխարհի ժողովուրդների մշակույթին հաղորդակից դարձնելու գործընթացի ապահովմանը:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով կշարունակվի սփյուռքում գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացումը, կխրախուսվեն հայրենիքում ու արտերկրում գործող հայ արվեստագետները՝ կկազմակերպվեն սփյուռքահայ արվեստագետների հոբելյաններ, աջակցություն կցուցաբերվի սփյուռքում գործող պարային և թատերախմբերի հյուրախաղերին, նկարիչների ցուցահանդեսներին, գրողների և գրահրատարակիչների համաժողովներին և այլն:

Ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացման նպատակով նախատեսված հատկացումները կուղղվեն ազգային փոքրամասնությունների համայնքների ինքնադրսևորման և ժամանակակից գործընթացների ներգրավվածության ապահովմանը, Հայաստանի մշակութային կյանքին լիարժեք ինտեգրմանը, պատմամշակութային ժառանգության պահպանության ապահովմանը:

Ֆիզիկական կուլտուրա, սպորտ և երիտասարդության բնագավառ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2016թ. իրականացվելու են օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստման, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովման, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման, ֆիզկուլտուրային-առողջարարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացման, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցությանն ուղղված աշխատանքներ՝ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցով:

Երիտասարդության հարցերի ոլորտում տարվող պետական քաղաքականության նպատակն է բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի ոլորտներում հիմնական գերակայություն է համարվում բնակչության ֆիզիկական պատրաստվածության բարձրացման, ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման, առողջ ապրելակերպի արմատավորման, անհատի ներդաշնակ զարգացման, հայրենիքի պաշտպանության գործին ֆիզիկապես և հոգեպես կոփված երիտասարդների պատրաստմանն ուղղված միջոցառումների իրականացումը, հաշմանդամային սպորտի զարգացումը, ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների նպատակային նախապատրաստումը և մրցումներին մասնակցությունը:

Ոլորտի զարգացման 2016 թվականի ռազմավարական ուղղվածությունը ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում ըստ ենթաոլորտների նախատեսվում է.

Մանկապատանեկան և մասսայական սպորտի ասպարեզում իրականացնել հետևյալ աշխատանքները.

- բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի իրավական դաշտի կատարելագործում,
- ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնների անցկացում,
- «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում,
- մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում,
- նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում:

Մեծ նվաճումների սպորտի ասպարեզում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում,
- միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնում,
- օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում,
- հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացում,
- ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում,
- Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում,
- Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում,
- Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայությունների ապահովում,
- Երևանում կայանալիք միջազգային մարաթոնյան վազքի անցկացման ապահովում,
- 2016 թվականի Ռիո դե Ժանեյրոյի 31-րդ Օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության նախապատրաստման և մասնակցության ապահովում,
- 2016 թվականի Ռիո Դե Ժանեյրոյի պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում,
- 2016 թվականի Լիլլեհամերի երկրորդ ձմեռային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում:

2016թ. նախատեսվում են նաև հետևյալ միջոցառումները՝ Թեհրանի խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում, Երևանում կայանալիք խուլերի շախմատի աշխարհի առաջնության անցկացման ապահովում, «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» և «Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ» մրցույթների անցկացում: Միջին մասնագիտական կրթություն և արտադպրոցական դաստիարակության ասպարեզում իրականացվելիք աշխատանքները ուղղված են լինելու մանկապատանեկան մարզադպրոցներում պարապողների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև նրանց կողմից ընտրված մարզաձևերից ունակությունների ձեռքբերման և կատարելագործման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը ու մատուցվող ծառայությունների ապահովմանը: Նշված նպատակներին հասնելու նպատակով նախատեսվում է իրականացնել միջին մասնագիտական կրթությամբ որակյալ կադրերի պատրաստում, պատանիների և մեծահասակների հավաքական թիմերի թեկնածուների պատրաստում, մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովում, մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերապատրաստումների կազմակերպում:

Երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը միտված է լինելու հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համակարգվածության մակարդակի բարձրացմանը և երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության խթանմանը, համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպմանը, Հայաստան-սփյուռք գործակցության զարգացմանը, բնակարանային խնդիրների հաղթահարման հարցում երիտասարդ ընտանիքներին աջակցությանը, երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների իրականացմանը:

2016 թվականին նախատեսվող ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության ոլորտների պետական քաղաքականության ուշադրությունը բևեռվելու է նաև արտադպրոցական դաստիարակության և Հայաստանի Հանրապետության ազգային մարզական ֆեդերացիաների զարգացման վրա:

Բնապահպանության ոլորտ

Բնապահպանության ոլորտում 2016թ. կարևորագույն և գերակա նպատակներն են.

- ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների (այդ թվում՝ ընդերքի) բանական օգտագործումը,

- շարունակել Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և պահպանության միջոցառումների իրականացումը,

- ապահովել անտառների ապօրինի հատումների կանխումը, անապատացման դեմ պայքարը, կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը, մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության կանխարգելմանը, կլիմայի փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը, ինչպես նաև օզոնային շերտի պահպանմանն ուղղված քայլերի իրականացումը,

- կատարելագործել բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգը և դրանց կառավարման մեխանիզմները, ապահովել դրանց մասով զարգացման ազգային ծրագրի ամբողջական իրականացումը,

- ապահովել բնական միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարումը, այդ թվում՝ բնական և մարդածին ազդեցությունների կանխատեսման և (կամ) կանխարգելման համակարգի զարգացումը՝ ներառյալ գոյություն ունեցող մշտադիտարկումների ցանցի կատարելագործումն ու ընդլայնումը,

2016թ. ընդգծված են լինելու հետևյալ աշխատանքները. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառումը, լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները, «Սևան» ազգային պարկի տարածքում գտնվող հանրային լողափերի սպասարկման ու նոր հանրային լողափի հիմնման աշխատանքները:

Սևանա լճի համալիր ծրագրի շրջանակներում 2016թ. նախատեսված է իրականացնել հետևյալ աշխատանքները. Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառումը (7,624.3 հազ. դրամ) և լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման աշխատանքները (125,400.0 հազ. դրամ):

2016 թվականին բյուջետային հատկացումները (856,956.0 հազ. դրամ) նպատակաուղղվելու են հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրեր, դենդրոպարկեր և բնության հատուկ պահպանվող այլ տարածքներ) պահպանությանը, անտառային տարածքների խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, ինչպես նաև Կովկասյան տարածաշրջանային կենտրոնի հայաստանյան

մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների ֆինանսավորմանը (7,139.7 հազ. դրամ):

Շրջակա միջավայրի պահպանության, մոնիտորինգի և տեղեկատվական վերլուծական աշխատանքների շրջանակներում 2016 թվականին իրականացվելու են շարունակական բնույթ ունեցող «Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծառայությունների» (160,695.1 հազ. դրամ), «Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայությունների» (20,517.4 հազ. դրամ), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ծառայություններ» (45,310.6 հազ. դրամ) և «ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայությունների» (45,501.6 հազ. դրամ) ծրագրերը:

Վտանգավոր թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարումն ապահովող աշխատանքների շրջանակում իրականացվելու է «Թափոնների ուսումնասիրության» ծրագիրը (16,652.1 հազ. դրամ):

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ 9 համայնքների սուբվենցիաներ կտրամադրվեն բնապահպանական ծրագրերի իրականացման համար (94,421.0 հազ.դրամ):

Բյուջեների կազմման բնագավառում

Հայաստանի Հանրապետությունում պետական ծախսերի առաջնահերթությունների սահմանման և պետական ֆինանսական ռեսուրսների՝ դրանց օգտագործման հասցեագրվածության, նպատակայնության, հրապարակայնության, հաշվետվողականության բարելավման շնորհիվ, օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով 2016 թվականին հետևողականորեն շարունակվելու է ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման աշխատանքների իրականացումը, որի համար հիմք է հանդիսանալու ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի օգոստոսին հավանության արժանացած Հայաստանի Հանրապետությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության իրագործման միջոցառումների ծրագիրը:

Վերը նշված միջոցառումներն ուղղված են Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման համար իրավական, մեթոդաբանական հիմքերի ապահովմանը, մարդկային ռեսուրսների գծով կարողությունների զարգացմանը, պետական մարմիններում Ծրագրային բյուջետավորման գործնական ներդրման ինստիտուցիոնալ խնդիրների կարգավորմանը, ռազմավարական պլանավորման համակարգի զարգացմանը, ծրագրերի գնահատման գործառույթի

ներդրմանը, ծրագրերի ծախսակազմման գործառույթների բարելավմանը, արտաքին աուդիտի շրջանակներում կատարողականի աուդիտի զարգացմանը և այլն:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում իրականացվելիք միջոցառումները բխելու են ՀՀ կառավարության գործունեության ծրագրից, ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից, հարկային և մաքսային վարչարարության ռազմավարություններից:

Մասնավորապես *հարկային ոլորտում*.

1. Կավարտվեն հարկային օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքները, որի շրջանակներում նախատեսվում է՝

- հարկային օրենսդրության համախմբում, պարզեցում և հստակեցում.

- ծախսեր-օգուտներ վերլուծության տեսանկյունից ոչ արդյունավետ հարկային արտոնությունների վերացում և հարկման բազայի ընդլայնում, դրույքաչափերի օպտիմալացում, հարկման մեխանիզմների կատարելագործում.

- ԵՏՄ անդամակցությամբ պայմանավորված հարկային հարաբերությունները կարգավորող ենթաօրենսդրական կարգավորումների համապատասխանեցում Եվրասիական տնտեսական միության օրենսդրությանը, անդամակցությունից բխող նոր ընթացակարգերի մշակում և վարչարարական գործընթացների ամբողջականացում. ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների հարկային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ներդրում, տեղեկատվական համակարգերի ներդաշնակեցում ԵՏՄ անդամ պետությունների տեղեկատվական համակարգերի հետ՝ փուլային ինտեգրման միջոցով:

2. Հասցեական և նպատակային հարկային վարչարարության իրականացման շնորհիվ ամբողջական ծավալով աշխատանքներ կիրականացվեն 2016թ. պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների ապահովման ուղղությամբ,

3. Կշարունակվեն և հետևողական աշխատանքներ կիրականացվեն ռիսկերի կառավարման մեխանիզմների հիման վրա թիրախային հարկային հսկողության իրականացման ուղղությամբ (այդ թվում՝ վերլուծական գործիքների կիրառմամբ), մասնավորապես.

- կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների արդիականացված համակարգի/այդ թվում կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների իրականացման միասնական մոդուլների ներդրում /,

- նոր և արդիականացված վերլուծական գործիքակազմի կիրառմամբ ռիսկային տնտեսավարող սուբյեկտների բացահայտում և ըստ ռիսկայնության աստիճանի նրանց նկատմամբ տարբերակված մոտեցումների ցուցաբերում,

- ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ներուժի բացահայտման նպատակով վերլուծական կարողությունների իրականացում, պետական բյուջեի եկամուտների վերլուծությունների իրականացման և արդյունքների իրացման կարգի կատարելագործում, հարկ վճարողների հարկային պարտավորությունների վերլուծությանն ուղղված՝ հարկային մարմնի աշխատանքների արդյունավետության բարձրացում,

- վերլուծական գործիքների զարգացմամբ ռիսկային ոլորտների գործունեության տեսակների բացահայտում, ռիսկային տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառում,

- գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողություն, այդ թվում՝ հաշվարկային փաստաթղթերի՝ բացառապես էլեկտրոնային եղանակով դուրս գրում,

- հսկողական աշխատանքներ իրականացնելիս երրորդ անձանցից տեղեկությունների ստացման և կառավարման միասնական համակարգերի ներդրում, ինչպես նաև հսկողական ու այլ աշխատանքների ընթացքում այդ տեղեկությունների ամբողջական իրացում,

- ստվերային տնտեսության ծավալների կրճատում, փաստաթղթաշրջանառության կանոնակարգման նպատակով գործարքների փաստաթղթավորման նկատմամբ հսկողական միջոցառումների արդյունավետության բարձրացում, անապրանք (կեղծ) փաստաթղթեր դուրս գրողների և կեղծ մաքսազերծողների դեմ պայքար:

4. 2016թ. ընթացքում կշարունակվեն աշխատանքները հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնման և որակի բարելավման ուղղությամբ, մասնավորապես.

- սպասարկման կենտրոնների կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում,

- հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնում, այդ թվում՝ էլեկտրոնային հարկային հաշվետվությունների ներկայացման դարանում հարկային պարտավորությունների ցուցադրման համակարգի գործարկմանն ուղղված աշխատանքների իրականացում,

- հարկ վճարողներին իրազեկման միջոցառումների կազմակերպում:

Մաքսային ոլորտում.

«Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի մշակման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է՝

- էլեկտրոնային մաքսային հայտարարագրման գերակայություն և գրավոր հայտարարագրման կիրառում միայն որոշակի դեպքերում,

- ապրանքների հայտարարագրում և տարանցման հայտարարագրում լրացման ենթակա տվյալների օպտիմալացում,

- ապրանքների հայտարարագրի ներկայացման հնարավորություն մաքսային մարմին առանց այնպիսի փաստաթղթեր ներկայացնելու, որոնց հիման վրա լրացվել է ապրանքների հայտարարագիրը,

- մաքսային գործառնությունների կատարելագործման նպատակով «Մեկ պատուհան» մեխանիզմի կիրառում, այդ թվում՝ ապրանքների ժամանման, մեկնման և մաքսային հայտարարագրման գործընթացում,

- Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների մասին մաքսային մարմիններին նախնական տեղեկությունների տրամադրման օպտիմալացում,

- չհավաքված կամ կազմատած ձևով մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային հայտարարագրման առանձնահատկությունների միասնակացում,

- էքսպրես փոխադրողների կողմից տեղափոխվող էքսպրես-բեռների հայտարարագրման հատուկ կարգի սահմանում,

- ապրանքների բացթողմնան ժամկետների կրճատում մաքսային հայտարարագրի գրանցման պահից մինչև 4 ժամ, եթե մաքսային հայտարարագրի ստուգման արդյունքներով չի առաջացել այն լրացնելու համար փաստաթղթեր պահանջելու կամ մաքսային հսկողության որոշակի ձևերի իրականացման անհրաժեշտություն,

- մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման ներկայացմամբ ապրանքների բացթողնման հնարավորություն, եթե նախքան ապրանքների բացթողումը սկսված մաքսային հսկողությունը դեռևս չի ավարտվել,

- լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի կատարելագործում, մասնավորապես՝ նախատեսվում է ներդնել լիազորված տնտեսական օպերատորի երեք տեսակի վկայականներ՝ համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից մշակված ստանդարտներին համապատասխան: Նշված երեք տեսակի վկայականների ներդրումն արդեն լիովին համահունչ կլինի Կիոտոյի միջազգային կոնվենցիայում և Համաշխարհային առևտրի անվտանգության և դյուրացման շրջանակային ստանդարտներում (SAFE Framework) ամրագրված դրույթներին,

- առանձին մաքսային ընթացակարգերի պայմանների հստակեցում,

- Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով առանձին տեսակի ապրանքների տեղափոխման պայմանների և կարգի պարզեցում:

Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով ուսումնական կենտրոնի կողմից կշարունակվեն հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստմանն ուղղված համապարփակ ուսումնական միջոցառումները: Երկարաժամկետ ուսումնական միջոցառումների կազմակերպման նպատակով կգործարկվի Դիլիջանի ուսումնական կետրոնը:

Կզարգացվի ՀՀ ֆինանսների նախարարության ՏՏ ենթակառուցվածքը՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների մշակման և վերլուծության անխափան ընթացքը և նոր մոդուլներով «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի համալրումն ապահովելու նպատակով: Աշխատանքներ կիրականացվեն ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների հարկային հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ներդրման և փուլային ինտեգրման միջոցով ՏՏ համակարգերի՝ ԵՏՄ անդամ պետությունների տեղեկատվական համակարգերի հետ ներդաշնակեցման ուղղությամբ:

Կընդլայնվեն պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ համագործակցության և վերջիններիս միջև տեղեկությունների փոխանակման շրջանակները:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման ոլորտում 2016թ. նախատեսվում է.

- ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակականությունը և նոր գործող ծրագրի գործողության ժամկետում ավարտին հասցնել պետական գույքի մասնավորեցման գործընթացը,

- իրականացնել պետական գույքի կառավարման 2016-2018 թվականների ծրագրով սահմանված միջոցառումները և նախատեսված գործողությունները,

- առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի արդյունավետ կառավարման շնորհիվ բարձրացնել ընկերությունների գրավչությունը տեղական ու օտարերկրյա ներդրողների համար,

- կատարելագործել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը՝ ընդլայնելով պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի հաշվառման բազան,

- պետական գույքի մասնավորեցման միջոցով ապահովել ծրագրային, այդ թվում՝ մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների ընդգրկման և սոցիալական երաշխիքների ապահովման առաջնայնությունը ,

- պետական գույքի վարձակալությունից, օտարումից ու մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին ավելացնել պետական բյուջեի եկամուտները,

- ներդրումների ներգրավման միջոցով իրականացնել պետական գույքի (շենք-շինություններ) վերանորոգման աշխատանքներ, որն ավելի գրավիչ կդարձնի դրանց վարձակալությունը,

- իրականացնել պետական գույքի հանձնման-ընդունման աշխատանքները, ավարտել պետական գույքի նկատմամբ սեփականության իրավունքների գրանցման աշխատանքները,

- ներդրումների և սոցիալական երաշխիքների ընդգրկմամբ, մասնավորեցման գործընթացի ապահովման շնորհիվ նպաստել հանրապետությունում տնտեսական աճի խթանմանը,

- ապահովել պետական գույքի օգտագործման արդյունավետությունը,

- պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում սահմանել կառավարիչների (աշխատակազմի ղեկավար, գործադիր տնօրեն, լիազոր ներկայացուցիչ) աշխատանքի վերահսկողության և գնահատման հստակ համակարգ,

- պետական գույքի կառավարման ոլորտում ապահովել մասնակիցների շահերի ներդաշնակությունը:

2016 թվականին իրականացվելիք միջոցառումների շնորհիվ ակնկալվում է ապահովել հետևյալ արդյունքները.

- իրականացնել «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007թթ. ծրագրի մասին» ՀՀ օրենքում ընդգրկված ընկերությունների և օբյեկտների մասնավորեցումը,

- վարձակալությունը որպես պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման գործիք կիրառելուն ուղղված քաղաքականության մշակումը,

- ՀՀ սեփականության իրավունքով պատկանող գույքը հավատարմագրային կառավարման հանձնելու գործընթացի իրականացումը,

- կատարելագործել պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական մոնիտորինգի համակարգը և բարձրացնել պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման որակը,

- պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման գործընթացում, մասնավորապես՝ անշարժ գույքը անհատույց օգտագործման հանձնելիս ապահովել դրանց սպասարկման խնդիրների լուծումը,

- բարձրացնել պետական անշարժ գույքի օգտագործման արդյունավետությունը, դրանից ստացվող եկամուտների ծավալը:

Անշարժ գույքի կադաստր

Անշարժ գույքի կադաստրի համակարգի զարգացման նպատակներն են հանդիսանալու.

- Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդիական, զարգացող տեղեկատվական հասարակության պահանջները բավա-

ռարելու ունակ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման բարձր մակարդակով համակարգի ձևավորումը և զարգացմանը խոչնդոտող գործոնների վերացումը,

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման գործառույթների իրականացման մեխանիզմերը կատարելագործումը,

- համակարգի գործառույթների ավտոմատացման մակարդակի բարձրացումը :

Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում նախատեսվում է աշխատանքներ իրականացնել գեոդեզիական, տեղագրական և թեմատիկ քարտեզագրության, երկրատեղեկատվական համակարգի ստեղծման, աշխարհագրական անվանումների քարտադարանի թարմացման և վարման ուղղություններով:

Հողաշինարարության և հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ. աշխատանքներ կիրականացվեն հողաշինարարության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման, պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների արդիականացման և կատարելագործման ուղղություններով, աջակցություն կցուցաբերվի հողերի միավորման և համայնքների խոշորացման ծրագրերին, ինչպես նաև հողի շուկայի ձևավորմանը:

Անշարժ գույքի միասնական հարկման նպատակով նախատեսվում է գնահատման նոր համակարգի ներդրում և անշարժ գույքի միասնական հարկին անցման աշխատանքների իրականացում, անշարժ գույքի շուկայի իրավիճակի փոփոխությունների բացահայտում և կադաստրային գնահատման կարգերի կատարելագործում:

«Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքների պահանջների համաձայն 2016 թվականին իրականացվելու է շենքերի, շինությունների և հողամասերի կադաստրային գնահատություն (վերագնահատություն)՝ Հայաստանի Հանրապետության գույքահարկի և հողի հարկի 2017-2019թթ. բազաների ձևավորման նպատակով և գնահատման (վերագնահատման) ամփոփ ցուցակները տրամադրվելու են տեղական ինքնակառավարման մարմիններին:

Անշարժ գույքի շուկայական մեթոդների վրա հիմնված գնահատման կարգերի մշակման նպատակով պարբերաբար կիրականացվեն համակարգված դիտարկումներ, որի հիմնական խնդիրն է անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովումը, անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը՝ հարկման նպատակով հողամասերի գոտիների սահմանների նկարագրման, տարածագնահատման գոտիականության գործակիցների և բազային արժեքների դուրս բերումը:

Հասարակական կարգի պահպանություն

Առաջիկա բյուջետային տարում ապահովվելու է ոլորտի տարբեր բնագավառներում շարունակվող բարեփոխումների համակարգված իրականացումը, հետևողականություն է ցուցաբերվելու օրինականության, հասարակական անդորրի, հասարակական կարգի, մարդու անվտանգության ապահովման, քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման գործում:

Ըստ այդմ առաջիկա բյուջետային տարում ոլորտում շարունակվելու են բարեփոխումների հետևյալ հիմնական ուղղությունները.

- Նախկինում ձեռքբերումների ամրապնդումն ու դրանց շարունակականության ապահովումը,

- Հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով նոր մեթոդների ուսումնասիրումը և ներդրումը, ոստիկանության տեխնիկական վերազինումը,

- Կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը,

- Ոստիկանության գործունեության թափանցիկության ապահովումը,

- Ոստիկանության գործունեությունը կանոնակարգող իրավական համակարգի կատարելագործումը,

- Ոստիկանության ծառայողների սոցիալական և իրավական պաշտպանության, աշխատանքային պայմանների բարելավումը:

Կադրային աշխատանքների կատարելագործման նպատակով իրականացնելու է «Կադրեր» ինֆորմացիոն վերլուծական նոր ստեղծված համակարգի հետագա կատարելագործումը և զարգացումը, ապահովվելու է ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին համակարգչային տեխնիկական միջոցներով վերազինելու գործընթացը, ինչպես նաև ոստիկանության կադրային ստորաբաժանումների հետ համակարգչային ցանցի ստեղծումը:

Համայնքային ոստիկանության աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով՝ նախատեսում է ստեղծել համայնքային ոստիկանության նոր հենակետեր, ինչպես նաև դրանք ապահովել տրանսպորտային միջոցներով և անհրաժեշտ այլ գույքով:

Միջազգային համագործակցության ակտիվացման նպատակով նախատեսվում է Ինտերպոլի հեռահաղորդակցման 1-24/7 համակարգին ՀՀ իրավապահ և շահագրգիռ այլ գերատեսչությունների ինտեգրման հնարավորության ընձեռում, ինչպես նաև ինտերպոլի կորած/գողացված ճամփորդական փաստաթղթերի տվյալների պահոցին ՀՀ սահմանային ծառայության հասանելիության ապահովում:

Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման աշխատանքների բարելավման նպատակով՝ նախատեսում է մարզային վարչություններում

նույնպես ստեղծել օպերատիվ արձագանքման կենտրոններ, հասարակական վայրերում տեղադրել տեսադիտական համակարգեր, օպերատիվ-ծառայողական մեքենաները վերազինել համակարգչային տեխնիկական միջոցներով:

Հանցագործությունների նախականխման, կանխման, բացահայտման և հետախուզվողների հայտնաբերման աշխատանքներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով՝

- նախատեսվում է ՀՀ ոստիկանությունում օպերատիվ և վարչական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների վարույթներում առկա հաշվառման գործերի և հաշվառումների թվայնացում, տեղեկատվական շտեմարանի ստեղծում, օպերատիվ հաշվառման գործերի նկատմամբ էլեկտրոնային վերահսկողության սահմանում,

- նախատեսում է ուսումնասիրել և ձեռք բերել դիմապատկերի միջոցով անձանց նույնացման գոյություն ունեցող մոդուլներ, ստեղծել և ներդնել դիմապատկերի նույնացման մոդուլի կիրառմամբ համակարգ, ՀՀ ոստիկանությունում ներկայումս գործող անձանց նույնացման համակարգերում ներդնել կենսաչափական տվյալներով՝ դիմապատկերով, անձանց նույնացման գործառույթ: Առաջարկվող տեխնոլոգիայի ներդրումը թույլ կտա անհամեմատ բարձրացնել ՀՀ ոստիկանության աշխատանքների արդյունավետությունը: Ելնելով ընձեռված լայն հնարավորություններից, հնարավոր կլինի նույնացնել հանցագործներին, միջադեպերի մասնակիցներին, անհայտ կորածներին, չճանաչված դիակներին: Ինչպես նաև մարդկային հոսքերի և կուտակումների ժամանակ իրավիճակների ճիշտ գնահատման նպատակով նույնացնել բազմության ներկայացուցիչներին: Բացահայտել և կանխել լուսանկար պարունակող կեղծ փաստաթղթերի շրջանառության դեպքերը: Մոդուլը հնարավորություն է տալիս անձանց նույնացնել ինչպես լուսանկարի, այնպես էլ դիմապատկերի, տեսահոսքի, տեսանյութի և բառացի նկարագրության հիման վրա ստեղծված պատկերի միջոցով: Նախատեսվում է ծրագիրն իրականացնել 2 փուլով: Առաջին փուլում կուսումնասիրվեն դիմապատկերի միջոցով անձանց նույնացման մոդուլի կիրառմամբ գոյություն ունեցող համակարգերը ընտրություն կատարելու նպատակով, իսկ 2-րդ փուլը ենթադրում է դիմապատկերի միջոցով անձանց նույնացման մոդուլի, համակարգչային տեխնիկական և ծրագրային միջոցների ձեռքբերում:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսում է Երևանում ստեղծել հետախույզ-պահնորդական շների բուծման և վարժեցման ժամանակակից կենտրոն, ինչպես նաև բարելավել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում ընդգրկված մարմինների նյութատեխնիկական բազան:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մակարդակի բարձրացման, մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի նվազեցման նպատակով՝

նախատեսվում է միջոցներ ձեռնարկել երթևեկության կազմակերպման միջոցների արդիականացման (երթևեկության հոսքը ավտոմատ կերպով հաշվարկող լուսացույցներ, ճանապարհային գծանշումներ և այլն), քարոզչական-նախականխիչ միջոցառումների ակտիվացման (սոցիալական հոլովակների պատրաստում և ցուցադրում, դպրոցականների շրջանում դասընթացների կազմակերպում և անցկացում և այլն) ուղղություններով:

ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերում տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողությունների իրականացման, ինչպես նաև վարորդական վկայականների հատկացման գործընթացի կատարելագործման նպատակով նախատեսում է հաշվառման-քննական ստորաբաժանումների վարչական շենքերի կառուցում և քննական ավտոդրոմի շահագործման հանձնում, հաշվառման-քննական ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցների գրանցման և հաշվառման գործողության իրականացում «հոսքագծի» եղանակով:

Կոռուպցիոն դրսևորումների ու ռիսկերի հնարավորինս բացառման նպատակով նախատեսում է տեխնիկական հնարավորությունների կիրառմամբ վերահսկել ճանապարհային ոստիկանի ծառայությունը, ամրագրել թույլ տրված իրավախախտումները և հնարավորինս կրճատել ոստիկան-քաղաքացի շփումը:

Բնակչության պետական ռեգիստրում ըստ բնակության վայրի անձանց հաշվառման պարտականության կատարման նպատակով հեշտացված մեխանիզմների ստեղծման, վարչարարության պարզեցման նպատակով նախատեսվում է օրենսդրական փոփոխություն կատարել և ստեղծել 183 օրից ավելի ժամկետով բնակվելու նպատակով հյուպատոսական հաշվառման կանգնած ՀՀ քաղաքացիների տվյալները հյուպատոսական հիմնարկներից էլեկտրոնային եղանակով ստանալու և օտարերկրյա պետության հասցեով հաշվառելու համակարգ:

ՀՀ ոստիկանության պետական պահպանման ոլորտում առավել առաջադիմական մեթոդների և ձևերի ներդրման նպատակով՝ նախատեսվում է ՀՀ ոստիկանության պետական պահպանման և ահազանգման տեխնիկական ժամանակակից սարքավորումների ձեռքբերում և ներդրում:

ՀՀ ոստիկանության ֆինանսական կառավարման, այդ թվում պետական միջոցների օգտագործման նկատմամբ հսկողության բարելավման նպատակով՝ նախատեսում է ՀՀ ոստիկանության բյուջետային (արտաբյուջետային) միջոցների նախահաշիվների կազմման, կատարման, հաշվետվությունների ներկայացման աշխատանքների ավտոմատացում, եկամտային հարկի վճարման և անձնավորված հաշվետվությունների ներկայացման կենտրոնացված, ինչպես նաև հաշվապա-

հական հաշվառման նոր համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքների իրականացում:

Միջազգային ստանդարտներին համապատասխանող քրեական վիճակագրության միասնական համակարգի ձևավորման և ներդրման նպատակով նախատեսվում է հանցագործությունների և դրանք կատարած անձանց միասնական հաշվառման ավտոմատացված համակարգի մշակում և ներդրում:

ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներին ապահովել թվայնացված շարժական կապի միջոցներով:

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության, օրինականության ապահովման, ոստիկանության ծառայողների կողմից ծառայողական կարգապահության ամրապնդման նպատակով նախատեսում է ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչությանը հնարավորություն ընձեռել «Առցանց» տարբերակով միանալու ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում տեղադրված տեսախցիկներին:

ՀՀ ոստիկանության գործունեության թափանցիկության, դրա վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով նախատեսում է ընդլայնել ոստիկանության մարմինների և քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների միջև փոխհամագործակցությունը և այլն:

Այսպիսով,ՀՀ ոստիկանությունը առաջիկա բյուջետային տարում շարունակելու է հետևողական և համակարգված աշխատանքները թե ձեռքբերումները ամրապնդելու և թե գործունեության բոլոր ոլորտներում առաջընթաց ապահովելու համար, հիմնական նպատակ ունենալով ժողովրդավարական հասարակարգերում ձևավորված չափանիշներին համապատասխանող ոստիկանություն ունենալու՝ հասարակության և պետության արդի պահանջի ըստ ամենայնի իրագործումը: